Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

8(713)
2025
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

ԳԻՏԵԼԻՔԸ՝ ԱԶԳԻ ՄՇՏԱԳՈՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ

Տասնամյակներ շարունակ, երբ գալիս էր սեպտեմբերը, Արցախում մանուկ ու մեծ անսահման երջանիկ էին: Եվ դժվար է ասել՝ երջանկության այդ զգացումն առավելապես Գիտելիքի օրվան նվիրված հանդիսությունի՞ց էր գալիս, թե՞ Անկախության հռչակման առթիվ կազմակերպված տոնական միջոցառումներից: Երևի երկուսը միասի՛ն, որովհետև այդ երկուսով էր հենց ամբողջանում Հայրենիքը: Հիմա, ավա՜ղ, միայն թանկ հուշերն են ջերմացնում նրանց՝ լուսանկարների, տեսանյութերի տեսքով վերապատկերելով երջանիկ պահերի դրվագները:

Սեպտեմբերի 1-ին հայաստանյան կրթօջախներում կրկին կղողանջի ուսումնական տարվա սկիզբն ավետող ուրախ զանգը: Իրենց դասընկերների հետ լուսառատ դասարաններ կմտնեն նաև Արցախից բռնատեղահանված դպրոցականները: Ամառային անհոգ օրերին կփոխարինի դպրոցական հագեցած առօրյան: Իսկ ահա Գիտելիքի օրվան հաջորդող տոնական հրճվանքը չի լինի, նրանց թրթռուն շուրթերից չեն հնչի օրհներգի կարոտալից բառերը.

Ազատ ու անկախ Արցախ,
Քո տուն-ամրոցը կերտեցինք,
Պատմությունը մեր երկրի,
Մեր սուրբ արյամբ մենք սերտեցինք:

Հայրենաբաղձության հուզմունքը լռին կթափահարի նրանց հոգու թևերը՝ մտովի ճախրելու հարազատ ծննդավայրի խաղաղ երկնքով, քայլելու մանկության անջինջ արահետներով: Երազանքը հիրավի՛ անհնար է խլել մարդուց՝ անկախ նրա տարիքից, որովհետև երազանքի մեջ միշտ նպատակ կա ու ձգտում...

Ասել ու կրկնում ենք. Հայաստանի Հանրապետության բոլոր կրթօջախներում սիրով են ընդունել արցախցիներին՝ ուսուցիչ, թե աշակերտ: Եվ այդ անփոփոխ գուրգուրանքով պարուրված, ուսումնական տարին ավելի հետաքրքիր ու բովանդակալից կդառնա: Գիտելիքը, Սուրբ Մեսրոպ Մաշտոցից մինչև մեր օրեր, կենսանպատակ է եղել հայ ժողովրդի համար: Գիտելիքն ուղղակի իմաստով ազգի մշտագոյության կարևոր պայմանն է, և այն անխոտոր ուղեկից կլինի նաև գալիք դարերում ու հազարամյակներում:

Բարի՜ երթ նոր ուսումնականին:

«ԼՈՒՍԱՐԱՐ»



Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՄԵՐ ՈՒԽՏԸ

Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս,
Ու գընում ենք մեր ճամփով,
Մրրրիկներով պատած անհույս,
Սև խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արյան ծովեր,
Սուր ենք տեսել ու կրակ,
Մեր ճակատը դեմ ենք արել
Մրրրիկներին հակառակ:

Ու թեպետև պատառ-պատառ
Մեր դրրոշը սրրբազան,
Ու մենք չունենք տեղ ու դադար՝
Երկրից երկիր ցիրուցան:

Բայց գընում ենք մենք անվեհեր
Ձարկերի տակ չար բախտի,
Մեր աչքերը միշտ դեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի:

Կնքվեց հուշագիր

ՆՊԱՏԱԿԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Վ. ՓԱՓԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ Է

Օգոստոսի 19-ին Երևանում Հայաստանի թատերական գործիչների միության (ՀԹԳՄ) նախագահ Հակոբ Ղազանչյանն ընդունեց Մոսկվայում գործող «Դիալոգ» հասարակական կազմակերպության նախագահ Յուրի Նավոյանին: Հանդիպման ընթացքում երկու կազմակերպությունների միջև կնքվեց հուշագիր՝ միտված Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի վերագործակցմանը: Ներկա էին թատրոնի դերասաններ՝ գեղարվեստական ղեկավար Ռուզաննա Խաչատրյանի գլխավորությամբ:

Իր ողջույնի խոսքում ՀԹԳՄ նախագահ Հ. Ղազանչյանը ներկայացրեց «Դիալոգ»-ի նախագահ Յու. Նավոյանին, կարևորեց նրա հայրենասիրական գործունեությունը՝ միտված հայ մշակութային, մասնավորապես, արցախյան խմբերին աջակցելուն: Նշեց՝ չնայած բազում խոչընդոտների, որ Մոսկվայում առաջ են գալիս Ադրբեջանի դեսպանատան կողմից, Նավոյանը հաղթահարում է դրանք: Արցախի բռնի հայաթափումից հետո հանրապետության մշակութային ավանդական կառույցների գործունեությունը կամ դադարել է, կամ աշխատում են ոչ լիարժեք: Հ. Ղազանչյանը տեղեկացրեց, որ Յու. Նավոյանի աջակցությամբ, արդեն ակտիվ գործում է «Արցախ» ջազը, և հանդիպման նպատակը Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի պահպանումն է՝ վերածնունդը: Իսկ դա կախված է նաև թատերախմբի աշխատանքից, ու հույս հայտնեց՝ առաջին ներկայացումը լինելու է հաջողված, իր ղեկավարած միությունն էլ կօգտագործի բոլոր լծակներն աջակցելու համար: Հավելեց նաև՝ «Գալյա Նովենց» թատերական դպրոցում իր ղեկավարությամբ գործելու է առանձին կուրս հատուկ արցախցի երիտասարդների համար, որտեղ դասախոսելու է Ռուզաննա Խաչատրյանը:

Իր խոսքում Յու. Նավոյանը մեծ պատիվ համարեց հանդիպումը թատերական գործիչների հետ: Նշեց, որ Արցախի հետ կապված է աշխատանքային բազում ծրագրերով:

☞ 3

ԱՐՑԱԽՅԻ ՄԱՐԶԻԿԸ՝ ՄԱՐՏԱԿԱՆ ՍԱՄԲՈՅԻ ՉԵՄՊԻՈՆ

Հայկական մարզաշխարհում կրկին տոն է. սամբոյի հերթական նվաճումն արձանագրվեց շնորհիվ արցախցի մարզիկ Արման Ավանեսյանի:

Արման Ավանեսյանը ծնվել է 1999թ. դեկտեմբերի 24-ին Արցախում: 8 տարեկանից հաճախել է ձյուդոյի մարզումների վաստակավոր մարզիչ Իվան Ազիզբեկյանի մոտ: Ձյուդոյում լավ արդյունք է ցուցաբերել, ինչն էլ լավ հիմք է հանդիսացել հետագա տարիներին իր ուժերն փորձելու նաև մարտական սամբոյում: Տաղանդավոր մարզիկը հաջողություն է ունեցել նաև մարտական սամբո մարզաձեւում:

2025թ. օգոստոսի 13-14-ը Չինաստանի Չենգդու քաղաքում կայացած «Աշխարհի խաղեր - 2025» մրցաշարում 98 կգ քաշային կարգում Արման Ավանեսյանը մարտական սամբո մարզաձեւում դարձավ չեմպիոն:

- Արման՛, նախ շնորհավորում ենք հաղթանակի առթիվ: Հե՞շտ էր մրցակիցներին հաղթելը:

- Շնորհակալություն: Այս մասշտաբով կազմակերպվող մրցաշարերին կարող են մասնակցել միայն վարկանշավոր մարզիկներ: Պետք է նշել, որ չեմպիոնի կոչման համար պայքարում էին իսկապես ուժեղ տիտղոսակիր մարզիկներ: Առաջին մարտը ուկրաինացի աշխարհի կրկնակի չեմպիոն մարզիկի հետ էր: Նրան հաղթելուց հետո կիսաեզրափակչում հանդիպեցի կամերունցի մարզիկի, իսկ եզրափակչում՝ ռուս տիտղոսակիր մարզիկի, որին պարտվել էի նախորդ մրցաշարերին, բայց այս անգամ կարողացա հաղթել նրան ու հռչակվել չեմպիոն: Հաղթանակին հասնելու ճանապարհը չի կարելի հեշտ անվանել, բայց փաստն այն է, որ երկար ու նպատակասլաց մարզումները տալիս են իրենց արդյունքը, ինչին պետք է մշտապես ձգտել:

- Ձյուդո մարզաձեւով պարապած լինելը բավարա՞ր է մարտական սամբոյում հաղթելու համար:

- Միայն ձյուդոյի մարզումները բավարար չեն, բայց ձյուդոն կարող է լավ հիմք տալ հետագայում նաեւ 3-4 տարի հարվածային տեխնիկա սովորելով՝ սամբոյում լավ արդյունքի հասնելու համար: 8 տարեկանից պարապել եմ ձյուդո: 2020թ. սկսել եմ զբաղվել սամբո մարզաձեւով, 2022թ.՝ մարտական սամբո:

- Ձեր ունեցած բազմաթիվ մարզական նվաճումներից որո՞նք եք առանձնացնում:

- Սպորտում ցանկացած նվաճում կարելի է առանձնացնել որպես փորձի ավելացման եւ նոր ձեռքբերման օրինակ: 2023թ. մարտական սամբոյի Եվրոպայի չեմպիոն եմ դարձել, Աշխարհի առաջնությունում՝ երրորդ տեղի մրցանակակիր: 2024թ. Եվրոպայի առաջնության երկրորդ, իսկ Աշխարհի՝ երրորդ տեղի մրցանակակիր եմ դարձել: 2025թ. Եվրոպայի չեմպիոն, Համազգային խաղերի չեմպիոն, Աշխարհի գավաթի արծաթե մեդալակիր եմ: Ձյուդոյի ՀՀ 5-ակի չեմպիոն եմ, Ձյուդոյի Հայաստանի սպորտի վարպետ, մարտական սամբոյի միջազգային սպորտի վարպետ: Ուզում եմ շնորհակալություն հայտնել իմ բոլոր մարզիչներին, ֆիզիկականի մարզիչ Արթուր Նժդեհին, բոլոր նրանց, ովքեր ներդրում ունեն իմ հաղթանակների հասնելու ճանապարհին:

- Առաջիկայում ի՞նչ անելիքներ ունեք:

- Պատրաստվում եմ մասնակցել սեպտեմբերի 13-ին Երեւանում կայանալիք պրոֆեսիոնալ խառը մենամարտերի MIX FIGHT 58-րդ միջազգային մրցաշարին: Նոյեմբերին կմասնակցեմ մարտական սամբոյի աշխարհի առաջնությանը:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԲՌՆԱՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՄՈՌԱՑՎՈՂ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուզաննա Հովհաննիսյանը ծնվել է 1989թ. նոյեմբերի 30-ին Ստեփանակերտ քաղաքում: Ավարտել է Ստեփանակերտի հ.3 դպրոցը: Սովորել է ԱրՊՀ քիմիայի եւ կենսաբանության ֆակուլտետում եւ ստացել կենսաբանի մասնագիտություն: 2012թ. ամուսնացել է հայրենիքի պաշտպանությանը նվիրված՝ ԱՀ ՊԲ սպայի հետ, ունեցել երկու զավակ:

Մեր զրուցակից Ռուզաննան, ծնվելով Արցախի համար պատմական ժամանակաշրջանում, երբ ծնողները մասնակցում էին Արցախի ազատագրական շարժմանը, չէր կարող չսերմանվել հայրենասիրական գաղափարներով: Ռուզաննան իր հասակակիցներից շատերի նման պատերազմի այն սերունդն է, որոնց վաղ մանկությունն անցել է նկուղներում, իսկ թոթով լեզվի առաջին խոսքերն ու արտահայտությունները «Ալազան», «Կրկժանից խփում են», «Գրադ» եւ նման բառերն էին:

Արցախցիներին պատուհասած ճակատագրային պատերազմները անմասն չեն թողել նաեւ Ռուզաննային ու նրա ընտանիքին: Հայրենանվեր սպայի կին լինելն արդեն իսկ հասկանալի է դարձնում, թե ինչ դժվարությունների պետք է հանդիպեր, երբ Արցախը վտանգված էր, իսկ ամուսինը գրեթե միշտ թեժ կետերում կռիվ էր տալիս: 2016-ի ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ արդեն ծնված էր նրանց դուստրը: Ռուզաննան, փոքր երեխան ձեռքին, շատ անհանգիստ պահեր է ապրել, մինչեւ որ ռազմական գործողությունները դադարել են և ամուսինը կարողացել է տուն գալ:

Չնայած նրան, որ օդում միշտ էլ կախված էին սպասվող պատերազմի մասին լուրեր, այնուամենայնիվ Արցախում ապրելու ու երեխաներ դաստիարակելու նրանց ցանկությունը վեր էր ամեն ինչից: 2020թ. 44-օրյա պատերազմի ժամանակ արդեն ծնվել էր նրանց որդին: Իրավիճակը կարծես կրկնվում էր: Ամուսինը պատերազմն սկսվելու առաջին պահից մեկնել էր ճակատ: Ռուզաննան հիմա էլ երկու փոքր երեխաների հետ էր մենակ մնացել ու ստիպված իջել իրենց շենքի ապաստարան: Սակայն այս անգամ դրությունն ավելի լուրջ էր. ռմբակոծվում էր նաեւ Ստեփանակերտը: Մարդիկ դուրս էին գալիս Արցախից: Ռուզաննան երկար մտածեց, բայց ի վերջո նա էլ երեխաների հետ տեղափոխվեց Հայաստան: Պատերազմն դադարելուց հետո վերադարձան Ստեփանակերտ, հարազատ տուն՝ հասկանալով, որ ամեն ինչ այլեւս առաջվանը չէ:

Մեզ հետ զրուցելիս Ռուզաննան իր ապրումներով այսպես է կիսվել. «Արցախում ապրելը գիտակցված ընտրություն է եղել: Նույնիսկ 2020թ. պատերազմից հետո Արցախ վերադառնալը գիտակցված էր: Մենք գիտեինք, որ հեշտ չի լինելու, բայց երեխաների հետ վերադարձանք՝ հասկանալով, որ առաջնագծում ենք հայտնվել: Մենք ունեինք հողը պահելու պարտականություն: Մենք ունեինք մեր մեծերի՝ պապիկների, տատիկների, ծնողների օրինակը մեր առջեւ, այն է՝ հողը ամուր պահել՝ ապրելով Արցախում: Ամուսինս շարունակում էր ծառայությունը ՊԲ-ում՝ պահելով մի բուռ դարձած Արցախի սահմանները: Իսկ ես մտածում էի, որ իրավունք չունենք թողնել մեր զինվորներին մենակ: Երբ սահման պահող զինվորը շրջվում է, նա պիտի զգա ու տեսնի, որ ինքը մենակ չէ, թիկունքում նույնպես պայքարում են հայրենիքի ազատության համար»:

2022թ. դեկտեմբերին փակվեց դեպի Մայր Հայաստան տանող կյանքի միակ ճանապարհը: Արցախը հայտնվեց կատարյալ շրջափակման մեջ: Վրա հասած բլոկադային արցախցիները դիմադրում էին ինչպես կարող էին: «Բլոկադային պայմաններում ամենածանրը թերեւս այն էր, որ երեխաները քաղցր էին ուզում, իսկ մենք ունեինք գումար, բայց գնելու ոչ մի բան չկար: Երեւի քարից են արցախցի մայրերիս սրտերը, երբ գիտակցում էինք, որ շատ շուտով երեխաներին տրվող այն մի կտոր հացն էլ չի լինելու, սակայն չէինք կոտրվում, առավել եւս հանձնվում: Բարոյապես շատ դժվար էր, բայց նախընտրում էինք մահը, քան թշնամուց հաց խնդրելը, այն էլ այն թշնամու, որի ստորության մակարդակը սահմաններ չունի:

2023թ. սեպտեմբերին մեր որդին պետք է գնար առաջին դասարան: Անհրաժեշտ գրենական պիտույքներ չկային, հագուստ չէր գտնվում, բայց մենք, օգտագործելով արցախցու հնարամտությունը, ինքներս պատրաստեցինք տետրեր: Օգտագործեցինք տան եղած հին տետրերի մաքուր էջերը, կազմեցինք, մի տեղից գրիչ, մի տեղից մատիտ, ամենակարեւորը՝ ծաղիկ էլ գտանք ուսուցիչների համար ու այդպես երեխաներին ուղարկեցինք դպրոց»,-վերհիշում է Ռուզաննան:

«Սեպտեմբերի 19-ին երեխաներին տարա դպրոց: Բլոկադային պայմաններում դասաժամերը կես ժամ էին տեւում, ուստի ժամը 12-ի կողմերը վերջանում էին դասերը: Մենք ապրում էինք Ստեփանակերտի Հեքիմյանի փողոցի շենքերից մեկում, երեխաները հաճախում էին Ավ.Իսահակյանի անվան հ.10 դպրոցը: Երբ գնում էի երեխաների հետեւից, դեռ չհասած դպրոց, ականջիս ձայներ էին հասնում. կարծես խուլ պայթյունների ձայներ լինեին: Ես գիտեի, որ վիճակը շատ լարված է: Եթե մինչ այդ ամուսինս կարողանում էր ոտքով տուն գալ ճաշելու, ապա վերջին օրերին չէր էլ գալիս: Ինչպես վիճակն էր տագնապային, այնպես էլ մեր ներքին ապրումները: Դպրոցում հանդիպեցի մայրերի, որոնք ասացին՝ Հարավի դիրքերին խփում են: Եղբայրս այնտեղ էր: Փորձեցի զանգել նրան: Երբ հաջողվեց կապվել հետը, ասաց՝ բան չկա: Բայց շատ անհանգիստ էի: Կապվեցի ամուսնուս հետ, նա էլ իր հերթին բարկացավ՝ ասելով, որ բան չկա: Կարծես բոլորը պայմանավորվել էին, որ իրականությունը պետք է թաքցնեն, այդ թվում եւ՝ ԿԳՄՍ նախարարությունը՝ ժամը 11:00-ի կողմերը հնչեցված հայտարարությամբ: Աղջիկս այդ օրը պետք է պարի ու նկարչության խմբակներ գնար, բայց ես, ելնելով իմ ներքին անհանգստությունից, չտարա: Երբ սկսվեց հրթիռակոծությունը, մենք տանն էինք: Իհարկե, սարսափելի ձայներին ծանոթ էի, հասկանում էի՝ ինչ է, բայց արգելակվել էի: Երեխաների վախեցած հարցադրումներից սթափվեցի, հապճեպ բռնեցի նրանց ձեռքերից եւ վազելով իջանք շենքի ապաստարան: Մեզ հետ էր ապրում ամուսնուս տարեց պապիկը, որը ձեռնափայտին հենվելով՝ հետեւեց մեզ: Նկուղում իրարանցում էր: Մարդիկ չգիտեին, թե որտեղ են իրենց տան անդամները, երեխաները: Մարդկանց մի մասը աշխատանքի էր, մի մասը՝ հերթերում, շատ երեխաներ դեռ դպրոցից չէին վերադարձել կամ ճանապարհին էին: Նկուղում մեզ է միանում մեր հարեւանի աղջիկը, որը նույնպես սովորում էր 10-րդ դպրոցում: Նա շատ վախեցած էր, պատմում էր, որ ռմբակոծության հետեւանքով դպրոցի պատը փլվել է, մի կերպ կարողացել է վազելով հասնել շենքի նկուղ:

Չայներն ինտենսիվանում էին, իսկ մենք ավելի ու ավելի էինք տագնապում: Մի կողմից վախը, մյուս կողմից նկուղում ջրի, սննդի, դեղերի ու այլ անհրաժեշտ իրերի բացակայությունը վատթարացնում էին վիճակը: Չնայած ինքս էլ վախենում էի, բայց համարձակվեցի բարձրանալ տուն՝ ջրի եւ իրերի հետեւից: Շենքը դղրդում էր: Արագ վերցրի ինչ կարողացա եւ նորից իջա նկուղ: Ժամ առ ժամ սարսափելի լուրեր էին հասնում: Կապի միջոց չկար: Արդեն չեմ հիշում երբ էր, որ ամուսինս մի քանի վայրկյանով մտավ նկուղ, գրկեց երեխաներին, իսկ իմ աչքերին չէր նայում: Նա ինձ փոխանցեց բռի մեջ պահած ոսկյա զարդերը, եւ իմ հարցերն անպատասխան թողնելով՝ հեռացավ: Ի՞նչ էր դա: Մի՞թե նրա հրաժեշտն էր. մտածում էի ես ու ատամներս սեղմելով՝ կուլ տալիս արցունքներս, որ հանկարծ չճչամ:

Մթնել էր: Երեխաներին պառկեցրել էի՝ մի ձեռքս մեկի, մի ձեռքս՝ մյուսի վրա պահելով: Զգում էի նրանց անհանգիստ շունչն ու սրտխփոցը: Ամեն պայթյունի ձայնից տղաս վեր էր թռչում: Ասում էինք, որ մերոնք են, որ մի քիչ գոնե հանգստանան: Մինչեւ հիմա չեմ կարողանում մոռանալ անօդաչուի սուր ձայնը, որը գնալով մոտենում էր, ասես գալիս էր հենց մեզ վրա: Ահասարսուռ ձայնին գումարվել էին նկուղից դեպի դուրս փախչել ցանկացող երեխաների գոռոցները, անհանգիստ ճիչերն ու ընդհանուր լացը: Խուճապ էր: Մեծ ու փոքր իրար գլուխ բարձրանալով՝ շտապում էին դուրս պրծնել ապաստարանից: Ես քարացել մնացել էի երկու երեխաներիս գրկած: Քառսի ու խուճապի ձայների մեջ սկսեց նահանջել անօդաչուի ձայնը, հավանաբար այն հեռացավ: Նկուղում շնչելը դժվար էր, կրծքավանդակս շատ էր ծանրացել: Մի րոպեով ցանկացա դուրս գալ, թթվածին հավաքել: Դրսում խավար էր: Դեռ լիաթոք չշնչած՝ երկինքը լուսավորվեց շղթայական լույսերով: Կասետային ռումբերն էին շողշողալով, մահ ու ավերածություններ սփռում Ստեփանակերտի վրա: Հնարավոր չէր մնալ դրսում: Չգիտեի՝ ինչ է սպասվում մեզ: Միամտորեն կարծում էի, թե ուր որ է օգնության կգան մեզ: Բայց ոչ մի օգնություն չկար: Մեր տղաները մնացել էին մենակ՝ իրենց վրա վերցնելով համայն հայությանն ուղղված հուժկու հարվածը:

Գիշերվա ժամը երեքին սկսվեց ներքին տեղահանվածների առաջին ալիքը: Գետավանից էին եկել, հայտնեցին, որ պայթեցրել են կամուրջը, Գետավանն այլեւս չկա: Հոգնած, շոկային վիճակում երեխաներ, տարեցներ, կանայք էին, որոնք տեղավորվեցին Ստեփանակերտի ապաստարաններում: Մեր հարազատներից ոչ մեկի հետ կապվել չէր ստացվում: Ես գիտեի, որ ամուսինս նույնպես այդ դիրքերում կարող էր լինել: Մղձավանջային ապրումներս թեթեւացան մեր հարեւանների միջոցով ինձ հասած տեղեկությամբ, որ ամուսինս ողջ է: Մի կերպ լուսացրինք: Սեպտեմբերի 20-ին, ժամը 13:00-ին մեզ համար կյանքը կանգ առավ: Հայտնի դարձավ, որ զինաթափման հրաման կա, եւ որ ճանապարհը բացվել է մեր դուրս գալու համար: Մեր շրջապատում գրեթե բոլոր տղամարդիկ զինծառայողներ էին: Նրանցից ոմանք սկսեցին գալ տուն, համազգեստ էին վառում, ոմանք տան իրերն էին հավաքում: Բայց ամուսինս չէր գալիս տուն:

Քաղաքի վերեւի մասից լսելի էին ինքնաձիգի կրակոցներ, փոխհրաձգության նմանվող ձայներ: Ամենասարսափելի բաներն էի մտածում: Թվում էր, թե անպաշտպան ենք: Մտածում էի, որ կարող է պատահել զինված թշնամին ներխուժի քաղաք ու ապաստարաններ: Նպատակային համարեցի երեխաների հետ բարձրանալ բնակարան: Շուտով մեր տուն եկան քաղաքի Արմենավան թաղամասում բնակվող ամուսնուս բարեկամները: Իրենց տանը մնալն արդեն վտանգավոր էր: Մեր շենքի միջանցքում փայտե վառարան էինք տեղադրել: Դույլով ջուր էի տաքացրած պահում, սպասում էի, որ ուր որ է կգա նաեւ ամուսինս, որ կարողանա լոգանք ընդունել, լվացվել: Շենքի զինվորական տղամարդիկ եկել էին: Նրանք մտերիմ էին ամուսնուս հետ, եւ իհարկե գիտեին, որ ամուսինս գնացել է Կրկժան՝ օգնելու կասեցնել թշնամու մուտքը Ստեփանակերտ: Ես սկսում էի հասկանալ, որ եթե բոլորը այստեղ են, իսկ ամուսինս դեռ ոչ, ուրեմն վտանգ կա, որի կենտրոնում չլինել ամուսինս ուղղակի չէր կարող:

Սեպտեմբերի 21-ին որոշեցի գնալ ծնողներիս տուն, եղբորիցս նույնպես տեղեկություն չունեի, կապի միջոց դեռ չկար: Իմ հայրական տունը շատ հեռու չէր, Կարմիր խաչի գրասենյակի մոտակա շենքում էր: Ոտքով գնացի, հանդիպեցի ծնողներիս, բարեբախտաբար եղբայրս ողջ էր, բայց դեռ տանը չէր:

Մեր քաղաքն ասես ուրիշ լիներ: Ամենուրեք տեղահանված մարդկանց խմբեր, վառարաններ փողոցների կողքերին, մի կողմից վառվող համազգեստի ու տան իրերի տհաճ հոտն էր զգայարաններս ներծծում, մյուս կողմից լսելի էին հրաձգության ականջահյուծիչ ձայները, իսկ աչքերիցս չէր վրիպում հուսահատված ու սոված մնացած մարդկանց շարժումները, որոնք փորձում էին քաղաքում աճող ընկույզի ծառից մի քանի ընկույզ հայթայթել սնվելու համար: Ինչ դաժան էր իրականությունը:

Երբ տուն վերադարձա, բարձրացա տանիք, որտեղ կապը խափանումներով կար: Կարողացա կապվել ամուսնուս հետ, որի հետ խոսելու ընթացքում լսվող ձայներից ինձ հասկանալի դարձավ, որ նա քաղաքի արվարձաններում մարտեր է տալիս: Որպես կին ու երեխաների մայր, ես նրան մեղադրում էի, որ կարող էր գալ, բայց նախընտրեց մնալ ու պաշտպանել մեզ մինչեւ վերջ: Բայց որպես սպայի կին հասկանում ու հարգում էի նրա ընտրությունը: Վայրկյաններ տեւած մեր խոսակցության ընթացքում հասցրեցի ասել, որ երեխաները իրեն են սպասում, նա պատասխանեց, որ խոստանում է գալ: Հետագայում պարզվեց, որ քիչ հետո վիրավորվել էր…

Ամուսինս վիրավորվել էր ոտքից, ընդ որում՝ այն զինատեսակից, որի կիրառումն արգելված էր: Մենակ մնալով թշնամու կրակոցների տակ, արյունահոսող վերքով մերթ սողեսող, մերթ գլորվելով մարտ տալով նրան հաջողվել է թույլ չտալ թշնամու առաջխաղացումը եւ տեղափոխվել քաղաքի բանուկ մաս, որտեղ հանդիպելով մեր ոստիկաններին՝ համատեղ ջանքերով տեղափոխվել է հիվանդանոց:

Մեր զինծառայողները մինչեւ վերջ պայքարել են եւ կատարել են դա պատվով: Ի պատասխան այն խոսակցությունների, թե արցախցիները չեն կռվել, հայտարարում եմ, որ արցախցի զինծառայողները պայքարել են մինչեւ վերջ, արել են հնարավորն ու անհնարը՝ պաշտպանելու հայրենիքում ապրելու մեր իրավունքն ու ազատությունը՝ կասեցնելով թշնամու մուտքը Ստեփանակերտ»:

Ամուսնու վիրավորվելու լուրն իմանալուն պես Ռուզաննան գնում է հիվանդանոց, տեսնում, հասկանում, որ նա ծանր վիրավոր է: Բայց նրան Հայաստան տեղափոխելու այլ միջոց ու բժշկական ուղեկցություն չկար: Ծանր վիրավորում ստացած ՊԲ սպան պետք է հատեր սահմանը բոլորի պես:

Բռնատեղահանման ճանապարհը, որը ստացել է «Դժոխքի ճամփա» անունը, մղձավանջային էր նաեւ Ռուզաննայի ու նրա ընտանիքի համար: Դժվար էր նաեւ Հայաստանում փախստականի կարգավիճակով ապրելը, երկու բալիկների հետ վիրավոր ամուսնուն խնամելը, մինչեւ վերջինս վիրահատություններից հետո կկարողանար ոտքի կանգնել:

Շուրջ երկու տարի է անցել 2023թ. սեպտեմբերյան դեպքերից, բայց սարսափելի օրերը հիշողության մեջ դեռ վառ են մնում: Սփոփվում են Արցախ վերադարձի հույսով, ինչն էլ ցանկալի է, որ չմարի ոչ մի արցախյան ընտանիքում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՅԱՎԵՐԳ

ԿՅԱՆՔԻՍ ԲՈՒՅՆԸ՝ ՈՍՏԱՆ ԱՅԼՈՑ

Թողեցինք ձեզ մենակ, տխուր հայացքով առ Աստված: Պինդ պահենք թեև փոքրիկ, բայց աշխարհին ներկայանալու և հարատևելու հայի անձնագիրը՝ հայոց պետականությունը: Ազգովի վարենք ճիշտ քաղաքականություն, ազգային քարոզչության մեքենան աշխատեցնենք:

Ու տակավին դեռ էն գլխից,
Դեռ շատ փոքրուց, իմ ծննդից,
Մեծ աշխարհում իմ տարածքի,
Իմ անձնական ոտնահետքի,
Իմ պարտեզի ես ոճաբան ու պարտիզպան,
Իմ ամրոցի՝ անխոնջ վարպետ ու որմնաշար…
Անունն էր իմ
… Անտաշ քարտաշ՝ մուրճը ձեռքիս,
Պարտապանի ուսապարկը միշտ իմ ուսին,
Լայն աշխարհում ես իմ Բույնի,
Անխոնջ ու լուռ մշակն էի…
Իմաստունը՝ ժողովուրդը, ճիշտ է դատել,
Աստված գիտի՝ ում ինչ բաշխել,
Ինչ բաժին տալ և ում ձեռքին՝ որ Զորության
Խաչը դնել…
Բնույթն էր իմ՝ գուցե մի քիչ աշխատասեր,
Գուցե մի քիչ կամքով արի,
Գուցե մի քիչ լուսավորյալ ու կորովի,
Գուցե մի քիչ նկատելի…
Եվ ՆԱ տեսավ՝ Տերն - Արարիչ ամենակալ,
Որ Երկնային դատավորն է այս աշխարհի,
Որ սպասում էր ճամփի եզրին հազարավոր
մարդկանց երթում.
Ինձ էր սպասում.
Պարտապանի ուսապարկով՝ վրան խարան՝ իմ անունով,
Ոտից գլուխ չափելով ինձ, ՆԱ խստաբար նայեց, ասաց.
- Սա է Խաչը, կյանքիդ Խաչը,
Վերցրո՛ւ, կրի՛ր դու քո Խաչը:
Չերկնչեցի ու հեզորեն իմ ԱՆՈՒՆ-ով ուսապարկը
Իմ ուսն առա
Իմ ուսն առա ու քայլ արի…
Քայլն առաջին, ապա՝ հաջորդ,
Հետո՝ հաջորդ քայլերը իմ, որ քայլք դարձան,
Անկանգ Մեծ Վազք փշոտ ճամփով…
Բազմահազար կետերի մեջ մի խուլ տեղում
Մի ոտնաչափ կետս գտա՝ իմ անունով,
Որպես ազնիվ ես մի վազորդ՝ քայլ արեցի,
Ճամփա ելա…
Մեծ աշխարհում ես իմ բույնի, իմ տարածքի
Անխոնջ ու լուռ մշակն էի,
Պարտապանի ուսապարկը՝ միշտ իմ ուսին,
- Ես՝ շինարար, ես՝ կառուցող,
Անտաշ վարպետ, հմուտ վարպետ,
Ստեղծող վարպետ, ճարտարապետ,
Ես՝ քրտնաքամ քանդակագործն իմ ՏԵՍԱԿ-ի
Ու իմ ծառի՝ մաքրաարմատ,
Գործն աշխարհի՝ անքննելի, անմեկնելի,
Գործը՝ մարդու նրա բաժին կյանքի ուղու,
Նրա հոգու մաքառումի, արարումի ու սլացքի

Նրա մարմնի տառապանքի, ուրախության,
Անմեկնելի, անքննելի,
- Եվ ո՞վ գիտի,
Ո՞ր թռչունի բույնն է ամուր՝ նրա հզոր մտքից շինված,
Ծիծեռնակի՞, արագիլի՞, թե՞ արծվի
Ես չգիտեմ, օ՜, բարդ է շատ, չգիտեմ, գիտեմ միայն,
Որ իմ Բույնը, Անձիս բույնը, Հոգուս բույնը
Պողպատից էլ ամուր է այն,
Որ իմ Ես-ից, որ իմ ներսից, իմ մարմնից
Մաս-մաս հանել,
Իմ արյունից, քրտնաշաղախ իմ մատներից
Ու իմ մտքից ծվեն-ծվեն ես հավաքել,
Շինել եմ բույն…
- Անձիս բույնը՝ երջանկության մի մեծ Ոստան այլոց համար,
Բույնն իմ Կյանքի՝ երկնել, հասել, ծվարել է
Բարդի ծառի վերին ճյուղին:
Տիրոջ ձայնին հույսով սպասել,
Մեր հին բակի Թեղի ծառից անվերջ սնվող,
Այսքան մոտիկ, այսքան հեռու, մեռնող կարոտ,
Մեր հին Բակի պապիս ծառին՝ Թեղի ծառին անվերջ հենված,
Բույնն իմ կյանքի, որ հասել ու ծվարել է
Մեր հին Բարդու վերին ճյուղին…

Անձիս բույնը՝ երանության մի մեծ Ոստան այլոց համար:
Քամուց ծեծված ու հալածված
Անձրևներից, տապից, տոթից և արտասված,
Անծանոթից ու ծանոթից, հարազատից հաճախ անգամ և քարկոծված,
Բայց չճկված, երբեք-երբեք ճաք չտված,
Այս աշխարհի արդարության ու պայքարի դրոշն առած,
Մնացել է նա միշտ կանգուն իր նվաճած բարձր տեղում՝
Մեր հին ու ծեր Բարդի ծառի վերին ճյուղին:
Բույնն իմ անձի՝ երջանկության մի մեծ Ոստան այլոց համար:
Անձիս բույնը՝ ոստան այլոց,
Մի ծղոտից, մի փետուրից, մի ծիլ խոտից,
Ճամփա բռնել ու բարձրացել:
Թոնրի նման ատամ-ատամ որմնաշարով,
Իմ օրրանի, իմ պապերի մաքրամաքուր
խոր արմատին պարուրվելով,
Գալարներով գալարվելով,
Եվ շյուղ առ շյուղ ագուցվելով, ամրանալով,
Տունս շինվեց, բույնս շինվեց,
Մի ծղոտից, մի փետուրից, մի ծիլ խոտից:
Ճամփա ելած՝ բույնս շինվեց,
Բնավորվեց ու տեղ գտավ
Բարդի ծառի վերին ճյուղին:
- Սա էր կյանքը, կյանքը Նրա,
Երևույթ էր մի լուսառատ,
Ուրիշների կյանքով ապրող այս լուսավոր մարդու կյանքը:

Հազարի մեջ՝ իր տեսակով մարդու կյանքը…
Թե հարվածվել, ես իմ դառը ումպն եմ ըմպել,
Ծիծաղելով, ոչ հեգնելով, ծիծաղելով,
Չիմանալով. ինչի՞ համար…
Ու չեմ ընկել, ու չեմ թեքվել, ու չեմ փոխվել,
Մնացել եմ մի երեսով, նույն երեսով,
Նույն երեսով, թող որ մաշված ու կոշտացած,
Բայց լուսարձակ՝ մի երեսով՝ ճշմարտության
Թոնրի բովում:
Նույն երեսով մարդկանց նայել չեմ վարանել,
Չեմ վիատվել, կանգ չեմ առել
Ու մտքերով նոր ուժ ստացած,
Նոր խոյանքով.
Բույնս նորից ես հարդարել,
Նոր քանդակներ ու նոր գույներ տվել նրան,
Որ տաք լինի այլոց համար,
Որ տաք լինի մարդկանց համար,
Որ չխամրի, որ միշտ փայլի նրանց համար, մարդկանց համար…
Ուրացումից անմարդկային հեռու մնամ, անկեղծանում,
Հարյուր-հարյուր օտար մարդուց ես սեր առա,
Սիրո մեծ Գետ, կյանքիս Գետը,

Գետն իմ կյանքի, իմ տեսակի,
Որ լցվել ու հորդացել է նրանց Սիրով՝
նրանց համար,
Այլոց սիրով, ոչ ինձ համար, այլոց համար…
-Կյանքիս ԳԵՏ-ը՝ երանության, խաղաղության
Խաղաղ օրրան, ծյունաճերմակ մեծ օրորոց,
նրանց համար, մարդկանց համար
Եվ խորաշերտ, հազարածալք մեծ շտեմարան,
Որ բոլորին տեղավորի իր ծալքերում,
Մի հացատուն հազարատեղ,
Ուր բոլորը իրենց տեղն ու աթոռն ունեն,
Ու ոսկետառ հազար էջից մի մեծ Մատյան,
Որում բոլորն իրենց էջն ու մասունքն ունեն:
- Անձիս բույնը մի ծղոտից, մի փետուրից, մի ծիլ խոտից
Ճամփա բռնեց ու բարձրացավ,
Աչքը հառած սեգ կատարին,
Սարալանջից նա քայլ առավ,
Քամուց ծեծված, քարից խփված,
Արևակեզ ու քրտնաթոր.
Սարալանջից նա քայլ առավ,
Լանջերն ի վեր, ժայռերն ի վեր,
Ու հասավ Տեղ, հասավ Սարին՝

Մեծ աշխարհի դիտակետին,
Անչափ, անսկիզբ մաքուր մի տեղ՝ բարձրում թառած,
… Աներևույթ մի դատարկ տեղ,
Երանությամբ լեցուն մի տեղ տիեզերքում,
Մի նվաճված լեռնագագաթ,
Որը սկիզբն էր դատարկության,
Մի նվաճված դատարկության,
Որը սկիզբն էր մի նոր ՍԿԶԲԻ…
Մի նոր ՍԿԶԲԻ՝ դատարկության նվաճումի:
Անչափելի մի ճանապարհ
Մի լուսավոր մարդու համար:
Եվ դատարկված, էությանս մեծ Բաժինը, մաշված ցուպս սարում թողած,
Իջնում եմ ցած դեպ սարալանջ՝
Դատարկության նվաճումի՝ նոր սարալանջ:
- Անունը իմ՝
Տաշված քարտաշ, հղկված քարտաշ,
Քանդակ, մատյան, գրիչ ձեռքիս…
Անձիս բույնը, կյանքիս բույնը՝ Ոստան այլոց,
Մի ծղոտից, մի փետուրից, մի ծիլ խոտից,
Սարալանջից ճամփա բռնեց ու բարձրացավ,
Բնավորվեց ու տեղ գտավ
Մեր հին Բարդու,
Մեր ծեր Բարդու վերին ճյուղին:

Լաուրա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Ասրյան)
Արցախից բռնապեղահանված
մանկավարժ

ՆՊԱՏԱԿԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Վ. ՓԱՓԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ Է

1 Դեռևս ՀՀ ԿԳ նախարարությունում Սփյուռքի բաժնի ղեկավար աշխատելու տարիներից է կապ հաստատել Արցախի կրթական ու մշակութային կառույցների հետ: Արդեն 7 տարվա պատմություն ունեցող «Դիալոգ»-ի ղեկավար լինելով՝ աշխատել է նաև Արցախի քաղաքական ղեկավարության հետ: 2023թ. տեղի ունեցած ողբերգությունից հետո կարևորում է մշակութային կառույցների հետ աշխատելը, աջակցելը: «Դիալոգ»-ի աջակցությամբ, Երևանում բացվել է Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի գրասենյակը: Թեմի մատենաշարով արդեն տպագրվել է «Արցախ. վտանգված ժառանգություն» ալբոմի առաջին հատորը: Ընթացքի մեջ է երկրորդ հատորի տպագրությունը: Շուտով նույն թեմայով կկայանա լուսանկարների ցուցահանդես: Անդրադարձավ Արցախի ջազ նվագախմբի վերականգնման իրողությանը: Այս տարվա ապրիլի սկզբին «Արցախ» ջազի գեղարվեստական ղեկավար Տիգրան Լալայանի հետ սկսել է իրականացնել խմբի գործունեությունը, և մայիսի 2-ին Երևանում տեղի է ունեցել առաջին համերգը: Այնուհետև երկու համերգ, չնայած ադրբեջանցիների խանգարումներին, կայացել է Մոսկվայում: Մոսկովյան հաջող ելույթներից հետո արցախցի ջազի վարպետները հուլիսի 31-ին ելույթ ունեցան Երևանում՝ Կոմիտասի անվան կամերային տան բաց դահլիճում: «Դիալոգ» մատենաշարով նաև արցախցի գրողների գրքեր են հրատարակվել:

Յու. Նավոյանի խոսքով՝ Վահրամ Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի վերակազմավորման գաղափարը մտահղացվել է՝ կարդալով ԱՀ ԱԺ նախկին պատգամավոր Վահրամ Աթանեսյանի գրառումը՝ «...Ինչու՞ չի գործում Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան փառահեղ թատրոնը...»: Եվ այս խնդրի լուծմամբ 2025թ. մայիսին ինքը հանդիպել է Հ. Ղազանչյանի և Ռ. Խաչատրյանի հետ: Եվ այսօր արդեն իրողություն է դառնում փառահեղ թատրոնի վերածնունդը:

Կայացած իրողության համար Ռ. Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց՝ թատրոնի վերակազմավորումը համարելով կարևոր քայլ, որն ապրեցնելու է անձնակազմին: Տեղեկացրեց, որ առաջին խաղը լինելու է բարբառով, որը դերասաններին ավելի է ոգևորելու: Վստահեցրեց՝ իրենք կարդարացնեն երկու կառույցների ղեկավարների հույսերը:

Ելույթներից հետո Հ. Ղազանչյանն ու Յու. Նավոյանը կնքեցին հուշագիրը, որը մեծ աջակցություն է արցախյան մշակութային կառույցներից մեկին:

Յու. Նավոյանը հուշագիր կնքեց նաև «Գալյա Նովենց» թատերական դպրոցի հիմնադիր դերասանուհի Մարիամ Ղազանչյանի հետ: Այդ առթիվ Յու. Նավոյանն ասաց. «Սա երկու նպատակ ունի՝ նախ արցախցի տաղանդավոր երիտասարդներին ներառել թատերական կրթության ոլորտ և երկրորդ՝ դրանով կերաշխավորվի Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի հետագա համալրումը երիտասարդ դերասաններով արդեն Երևանում: Եվ կարևոր է, որ դասընթացը ղեկավարելու է Հակոբ Ղազանչյանը՝ ընդգրկելով Հայաստանում ճանաչված թատերական գործիչների: Լավ է նաև, որ ուսանողների հետ աշխատելու է Ռ. Խաչատրյանը, իսկ «Դիալոգ»-ը վճարելու է 15 ուսանողի ուսման վարձը»:

Հ. Ղազանչյանի հետ կնքած հուշագրի առթիվ Յու. Նավոյանն ասաց. «Ստորագրված հուշագիրն արդեն հանրայնացրեց մոտ մեկ ամիս ընթացքի մեջ եղած աշխատանքը: Թատրոնի դերասաններին Ռ. Խաչատրյանի շուրջ համախմբելու և մեկ պիես բեմադրելու համար արդեն որոշվել է՝ դա Ալեքսանդր Մանասյանի գործերից է: Թատերախումբը կարևորում է, որ իրենց վերածնունդը նշանավորվի Արցախի բարբառով խաղալուն: Սա իրենց համար հոգեբանական մեծ նշանակություն ունի և հավելյալ ինքնավստահություն է տալու: Ես սա համարում եմ Հայաստանի թատերական դաշտում մի նոր կոլորիտ ու մի նոր խոսք. ինձ հետ համաձայն է նաև պարոն Ղազանչյանը: Մոտավորապես 1-2 ամիս անց թատերախումբն այս պիեսով բեմ կբարձրանա: Երկրորդը լինելու է Մուրացանի «Ռուզան» կամ «Հայրենասեր օրիորդ» դրամա: Շատ կարևոր է, որ թատերախմբի գործունեությունը, չնայած բոլորն էլ արհեստավարժ դերասաններ են, տեղի ունենա Թատերական գործիչների միության հետ համախորհուրդ: Դա հավելյալ երաշխիք է, որ ամեն ինչ լավ է ընթանալու»:

Հ. Գ.

Ստեփանակերտի հայկական պետական դրամատիկական թատրոնը կազմավորվել է 1932թ. Կարո Ալվարյանի ղեկավարությամբ: Բացումը կայացել է օգոստոսի 11-ին՝ Վաղարշ Վաղարշյանի «Օղակում» պիեսի բեմականացմամբ: Մինչև 1989թ. կոչվել է Մաքսիմ Գորկու, այնուհետև՝ Վահրամ Փափազյանի անունով: Թատրոնում հյուրախաղերով հանդես են եկել Հովհաննես Աբելյանը, Ժասմենը, Ի. Ալիխանյանը, Վահրամ Փափազյանը, Արուս Ոսկանյանը, Հրաչյա Ներսիսյանը, Ավետ Ավետիսյանը, Բաքվի հայկական, Երևանի Սունդուկյանի անվան թատրոնների կոլեկտիվները:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ

«ԿԱՊԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» ՀՆԱՎԱՅՐԻ ԱՄՐՈՑՈՒՄ

*Լրագրող, լուսանկարիչ **Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆԸ** աշխատանքային խմբով այս օրերին շրջագայում է Սյունիքի մարզում՝ հնավայրերի ուսումնասիրման և լուսանկարահանումների նպատակով: Այդ մասին է հեղինակի հոդվածաշարը (4-6-րդ էջեր):*

Ստեփանոս Օրբելյանի «Հայոց պատմություն» գրքում, 5-րդ դարում կատարված իրադարձությունների հետ կապված, կա հիշատակություն. «Եվ Կապանից այստեղ եկավ հայր Հովհաննեսը, վանականներին վերցնելով գնաց գետի ափը, Տիրոջից խնդրեց վանականների կարիքների համար ձուկ շնորհել...» (էջ՝ 118):

Ստ. Օրբելյանի հիշատակած Կապան բնակավայրը գտնվում է ներկայիս Սյունիքի մարզկենտրոն Կապան քաղաքից դեպի Քաջարան տանող ճանապարհի ձախակողմյան ոչ բարձր բլրի վրա՝ Ողջի գետի աջ ափին: Տեղացիները քաղաքատեղին, որն այժմ ամբողջությամբ անտառապատ է, կոչում են «Տանձու լենջ»: Այստեղ դեռևս 5-րդ դարում գոյություն է ունեցել Սյունյաց իշխանների բնակավայր-ամրոցը, որը 10-րդ դարում արդեն Սյունիքի թագավորների նստավայր-մայրաքաղաքն էր: Մինչ այդ էլ Կապանը եղել է իշխանանիստ. Աշոտ Երկաթ Բագրատունի արքայի օրոք (915-930թթ..) Կապանի տերն է եղել Զագիկ Երրորդ իշխանը, որն ուներ երկու որդի՝ Զևանշեր և Վահան: Ստ. Օրբելյանը «Սյունիքի պատմություն» գրքում (էջ՝ 192), հիշատակելով արաբ զորավար Նսրի չարագործությունների մասին, գրում է. «Այս օրերին ծաղկում էր այս իշխանների ազգական Զագիկ մեծ իշխանը՝ Սիսական տոհմից՝ լի ամենայն բարեպաշտությամբ, որը բաժին ուներ Բաղաց աշխարհն ու Կապան քաղաքը: Բազմաթիվ բարեգործություններից հետո նա վախճանվում է ու թաղվում իր նախնիների մոտ՝ ժառանգ թողնելով Զեվանշիրին և Վահանին (Վահանվանքի կառուցողը. Զ. Ը.)» (էջ՝ 192): 958թ. Կապան է այցելել Անանիա Ա Մոկացի (ծ. թ. անհայտ- մահացել է 968թ.) Ամենայն Հայոց կաթողիկոսը: Այս առթիվ Ստ. Օրբելյանը գրում է. «... իսկ ինքը գնաց Կապան քաղաքը: Նրան ընդառաջ ելնելով բանադրված Զեվանշիր իշխանը՝ զղջմամբ խոստովանեց իր մեղքերը: Նույնպես և եկավ Սյունյաց գահերեց իշխան Վասակը՝ Աշոտի որդի Սմբատի որդին, գեղեցիկ խոստովանությամբ մեղա եկավ: Այսպիսով միասին կաթողիկոսից իրենց հանցանքների համար ներում ստանալով՝ նրան տարան, իջեցրեցին Կապան քաղաքի արքունական գահույքի վրա...» (էջ՝ 246): Այսպիսով, ավելի քան 700 տարի Կապան քաղաքը եղել է Սյունիքի կենտրոնը՝ շեն ու մարդաշատ:

Կապանից ոչ հեռու՝ հարավարևմտյան կողմում՝ Ողջի գետի ձախ ափին, միջնադարում գոյություն է ունեցել Սյունիքի հզոր ամրոցներից Բաղաբերդը, որի ավերակները պահպանվում են գրեթե ամբողջովին ժայռակերտ բլրի վրա: Այս հատվածում Ողջիին է միանում Գիրաթաղ գետակը: Սակայն մեր երկիրը մշտապես է եղել պայքարի մեջ տարբեր թշնամիների հետ: Հաճախ նաև անմիաբանությունն է եղել պարտությունների պատճառ: Արաբական արշավանքներից հետո գալիս է նոր թշնամին՝ սելջուկ-թուրքերը: Կապան քաղաքի ու ամրոցի մասին մի քանի անգամ հիշատակում է պատմիչը: «Կապանի ավերման ու բերդերի գրավման պատճառը. Բաղաց թագավորության իսպառ վերացումը և Սիսական տոհմի վերջը» ԿԱ գլխում (էջ՝ 277) Ստ. Օրբելյանը գրում է. «Այն տարում, երբ Հայոց հինգ հարյուր հիսուներկու թվականն էր (552+551=1103թ.), եղավ Կապան գավառի և Բաղաց ամուր աշխարհի ավերման ու նրանց թագավորների և իշխանների տիրապետության վերացման սկիզբը, որի մասին կարդացինք ու իմացանք Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ստեփանոսի թղթերից, որ գրել էր հոյակապ Անի քաղաքում...» (էջ՝ 277):

Այնուհետև պատմիչը գրում է պատճառների մասին՝ կարևորներից համարելով Սենեքերիմ թագավորի՝ Պարսկաստանի մայրաքաղաք Սպահան գնալը, Մելիքշահ սուլթանին հանդիպելը և նրա չար ծառաներից Չորթմանի հետ խնդիրներ ունենալը: Նույն 1103 թվականին հիշյալ Չորթմանը, Մելիքշահի և նրա որդի՝ Բեկիարուխի մահից հետո մեծ զորքերով հանկարծակի հարձակվում է Կապան քաղաքի վրա: Քանի որ Կապանը գտնվում է ավելի բարձր ու հիմնականում ժայռակերտ սարերի արանքում, Չորթմանը նույն սարերից է հարձակվում քաղաքի վրա: Օրբելյանը նկարագրում է այդ հարձակումը. «Նախ բազմաթիվ հետևակ ծերպամուտ ու քարագնաց զորականներ բարձրացան ապառաժոտ լեռան գլուխը և հեղեղատի մեծ հունով իջան քաղաք, քանի որ այդ տեղը պարսպապակված չէր՝ մարդկանց մուտքի համար անհնարին լինելու պատճառով: Սկսեցին կոտորել Զիտաթաղի կողմից: Նրանք բացեցին քաղաքի դարպասը, որ նայում էր Խնձորոգլխին» (էջ՝ 278): Այդ ժամանակ քաղաքի բնակչությանը կոտորել են, բայց ամրոցը թշնամին չի կարողացել գրավել: Կապանը վերջնական գրավվել է թշնամու կողմից ու ավերվել Հայոց հինգ հարյուր յոթանասունհինգ թվականին (1126թ.): «...եկավ ամիր Հարոնը և բնաջնջեց Կապանի տունն ու Արևիք գավառը, գրավեց Կաքավաբերդն ու Բաղակաքարը. վերջին վանքն էր, որտեղ հավաքված կային բազմաթիվ սրբություններ...»,- գրում է Ստ. Օրբելյանը (էջ՝ 279): Այդ օրվանից էլ Սյունիքի թագավորության մայրաքաղաքը կորցրել է իր նշանակությունը, լքվել ու ամայացել: Այդ ժամանակ Սյունիքի թագավորությունը, ըստ Ստ. Օրբելյանի, ունեցել է 43 բերդ, որոնցից 12-ը եղել է անվանի, 48 վանք, 1008 գյուղ, իսկ մայրաքաղաքը Կապանն էր: Մինչև 1170 թվականը թշնամուն դիմակայել է հզոր ու անառիկ Բաղաբերդը: Սակայն Օրբելյանը գրում է. «619 թվականին (1170թ.) Աստված կրկին բարկացավ մեր Բաղաց աշխարհի ու Սյունյաց նահանգի վրա և բոլորի ապավեն ու ապաստարան անառիկ Բաղաբերդ ամրոցը մատնեց Իսմայելի՝ անիծյալ ու գիշակեր մարդու ձեռքը, որը բազմաքանակ զորքով եկավ, բայց չկարողացավ ոչինչ անել: Այնուհետև խաբեական խոսքերով խաբեց աչաղվացի պարզամիտ քրիստոնյա մարդկանց ու նրանց միջոցով նախ գրավեց Կկոց քարը, ապա գիշերը նույն մարդկանց միջոցով հափշտակեց Բաղաբերդը...» (էջ՝ 279):

Օրեր առաջ Կապանում էի, եղա և՛ Բաղաբերդում, և՛ «Կապան» հնավայրում: Երկու տեղում էլ կատարվում էին հնագիտական ուսումնասիրություններ ու պեղումներ: Բաղաբերդում նշված աշխատանքները, որ իրականացնում էր ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնագիտական արշավախումբը՝ պ. գ. թ. Ավետիս Գրիգորյանի ղեկավարությամբ, այս տարվա համար արդեն ավարտվել են: Իսկ Կապան մայրաքաղաքի հնավայրում պեղումները, որ կատարում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը՝ հնագետ Գագիկ Սարգսյանի գլխավորությամբ, դեռևս շարունակվում են:

ԱՅՍՏԵՂ ԵՂԵԼ Է ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

«Հինգ հարյուր յոթանասունհինգ թվականին (1126թ.) եկավ ամիր Հարոնը և բնաջնջեց Կապանի տունն ու Արևիք գավառը...»

Ստեփանոս Օրբելյան
«Սյունիքի պատմություն. էջ՝ 279»

Եվ այդ ժամանակից ավերվեց ու ամայի մնաց Սյունիքի թագավորության մայրաքաղաք Կապանը: Հնավայրն ընկած է Սյունիքի մարզկենտրոն Կապանից հարավ՝ Ողջի գետի աջափնյա ոչ բարձր բլրի վրա՝ Քաջարան ձգվող ճանապարհի ձախ եզրին: Այժմ երբեմնի մայրաքաղաքի տարածքում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը ուսումնասիրություններ ու պեղումներ է իրականացնում:

Օրերս Կապանում էի, այցելեցի նաև այս հնավայր և մոտակա Բաղաբերդի ամրոց, որտեղ նույնպես պեղումներ էին կատարվում: Բաղաբերդը եղել է Կապանի գլխավոր պաշտպան ամրոցը՝ գտնվելով պատմական Սյունիքի մայրաքաղաքից ոչ հեռու՝ հարավարևմտյան կողմում՝ Գիրաթաղ գետակի ափին: Ինչպես տեղեկացրեց «Կապան» հնավայրի պեղումների ղեկավար, հնագետ Գագիկ Սարգսյանը, այս հնավայրում դեռևս խորհրդային տարիներին՝ 1988-ին, իրենց գործընկեր Վահան Գայսերյանի կողմից կատարվել են որոշ ուսումնասիրություններ, տարածքը ճանաչվել է որպես պատմամշակութային հուշարձան: Այնուհետև հուշարձանը մնացել է ուշադրությունից դուրս, քանի որ ամբողջովին եղել է անտառապատ ու ծածկված մացառներով: 2023-ին սկսել են ուսումնասիրել Սյունիքի ամրոցները, և ծրագրում ընդգրկվել է նաև «Կապան» հնավայրը: Հնագետները մի կերպ մտել են տարածք և որոշել ուսումնասիրել ու պեղումներ իրականացնել այստեղ՝ հաշվի առնելով Սյունիքի թագավորության մայրաքաղաք լինելը: 2024-ին Գ. Սարգսյանը հանդիպել է Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանին և առաջարկել պեղել Կապան մայրաքաղաքի տարածքը: Եղել է համաձայնություն, և 2024-ի սեպտեմբերի 1-ից սկսել են պեղումները՝ Սյունիքի մարզպետարանի ֆինանսավորմամբ՝ «Զարգացման և ներդրումների հիմնադրամ»-ի միջոցներով: Սկզբում տեղի անտառտնտեսության կողմից ծառերից ու մացառներից մաքրվել է այսպես կոչված պալատական համալիրի ճանապարհը և տարածքը: 2024-ին բացել են ամրոցի առաջին շերտը, որը հիմնականում եղել է 19-20-րդ դարերում այստեղ կուտակված աղբ: Այդ ժամանակներում հնավայրի տարածքում մարդիկ են բնակվել, բանջարանոց ու այգիներ են մշակել, ընթացքում օգտագործել են նաև ամրոցի կանգուն պատերը, որոնց նոր կառույցներ ու պատեր են կցել: Այսինքն՝ պատմական տեղանքը խաթարվել էր: Նույն հեռացված աղբի մեջ հայտնաբերվել են արդեն միջնադարյան խեցեղենի բեկորներ, այդ ժամանակաշրջանի այլ հնագիտական նյութեր: «Սա էլ մեզ հույս տվեց, որ գործ ունենք Սյունյաց թագավորների դղյակի

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ

ԿՈՒՐԱԹ ԹԱԳԱՎՈՐԻ ՁՈՐԱԿՈՒՄ

Մեր երկիրը շատ հարուստ է պատմահնագիտական հուշարձաններով. ցանկացած վայրում հնարավոր է գտնել, տեսնել խաչքար, տապանաքար ու հնադարյան պատաշար ու դամբարան, ամրոց ու նման այլ կառույցներ: Եվ ինչ-որ տեղ նաև այս է պատճառը, որ հաճախ անտարբեր ենք մեր պատմության վկաների հանդեպ. ժողովրդական խոսքով ասած՝ աչքը սովոր է: Իսկ խորհրդային տարիներին, դրանից առաջ, նաև այսօր կատարված քանդիչ վերաբերմունքը մեծ վնասներ է հասցրել հայոց պատմությանը:

Վերջերս աշխատանքային խմբով Հին Խնձորեսկում էինք՝ ճարտարապետության դոկտոր, նկարիչ, քարանձավագետ, խաչքարագետ, ժայռապատկերներ ուսումնասիրող Սամվել Շահինյանի և ճարտարապետ դստերս՝ Գայանե Ըռքոյանի հետ՝ չափագրումներ ու լուսանկարահանումներ կատարելու նպատակով: Հանդիպեցինք գործարար Ժորա Ալեքսանյանին, որը շարունակում է այժմ ՌԴ Սուրգութ քաղաքում բնակվող խնձորեսկցի Ռազմիկ Ղալդունցի՝ Հին Խնձորեսկը բարեկարգելու գործը:

Ժ. Ալեքսանյանը ծնվել է Հին Խնձորեսկում, այժմ բնակվում է Գորիս քաղաքում: Հին Խնձորեսկում՝ ճոճվող կամրջի սկզբնամասում է գործում թանգարանը, որտեղ ցուցադրված են միջնադարում և մինչ վերջերս այս պատմական բնակավայրին վերաբերող ազգագրական ու հնագիտական իրեր: Ճոճվող կամուրջն ունի 160 մ երկարություն, 63 մ բարձրություն, 14 տ քաշ: Կառուցվել է 2012 թ. Ժորա Ալեքսանյանի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ՝ նվիրված իր ծնողների՝ Հայկ և Թամարա Ալեքսանյանների հիշատակին: Ժ. Ալեքսանյանի և տեղի զբոսավար Սևադա Շահնազարյանի ուղեկցությամբ ծանոթացանք թանգարանային նմուշներին: Քարանձավ-թանգարանը, որ ժամանակին եղել է 4 սենյականոց բնակարան, պատկանել է մեծ ընտանիքի: Տարբեր ցուցանմուշների շարքում է նաև Հրաչյա Դայու թախտը: Այստեղ Ժ. Ալեքսանյանը տրամադրեց կարևոր տեղեկություններ պատմական Խնձորեսկի մասին, որը կազմել է Ռուբեն Բեգլարյանը:

Աշխատանքից հետո Ժ. Ալեքսանյանն իր մեքենայով մեզ տարավ Խնձորեսկ-Տեղ դաշտամիջյան ճանապարհով, որտեղ N 38 31 655 և E 046 26 692 կոորդինատներում՝ ծովի մակերևույթից մոտ 1340 մ բարձրության վրա, թեք լանջի ստորին մասում կա հնավայր: Այս հատվածում են գտնվում Խնձորեսկի և Տեղի վարելահողերը, խոտհարքերը, արոտավայրերը: Խորհրդային տարիներին, ինչպես ընդունված էր, շատ տարածքներ էին ազատում քարակույտերից, ավերակներից, բլրակները հարթեցնում՝ տարբեր մշակաբույսեր ցանելու նպատակով: Ցավոք, այդ առաջին հայացքից կարևոր միջոցառումը նաև մեծ վնաս է հասցրել մեր պատմությանը. քանդվել, հողին են հավասարվել պատմական հուշարձաններ՝ եկեղեցիներ, մատուռներ, գերեզմանատներ, այդ թվում՝ դամբարանադաշտեր, ամրոցներ և այլն: Նույն ճակատագրին է արժանացել նաև այս հնավայրը, որը, ըստ տեղացիների, եղել է, այսպես կոչված՝ Կուրաթ թագավորի նստավայրը, որտեղից ժամանակին գյուղաշխատանքների ժամանակ կենցաղային իրեր են հայտնաբերվել: Ստեփանոս Օրբելյանն իր «Սյունիքի պատմություն» գրքում հիշատակում է Սյունիք աշխարհի Հաբանդ գավառի Վերին և Ներքին Կարբինք բնակավայրերի մասին, որոնք 8 միավոր հարկ են վճարել Տաթևի վանքին: Այսինքն՝ եղել են ոչ մեծ բնակավայրեր: Կա կարծիք, որ այս մասում է եղել նշված բնակավայրերից մեկը, որ սկսում է Կարփուն (Կարբինք) լատօկից (մինչ Գորիսի Խնձորեսկ հասնելը): Նույն կարծիքին է նաև Գորիսի պետական համալսարանի դասախոս, բ.գ.թ. Միհր Քումունցը, որը զբաղվում է նաև հայրենի երկրամասի բանահյուսությամբ, կատարում է տեղանունների ստուգաբանություն, զբաղվել է նաև այս հատվածի ուսումնասիրմամբ: Ասաց, որ այստեղ նաև կուրգանային թաղումներ են եղել, և գտնվել է հսկա մարդու գերեզման: Նա և Մ. Հախվերդյանը համահեղինակել են «Ստ. Օրբելյանի հիշատակած մի քանի տեղանունների ստուգաբանության և տեղադրման հարցեր» հոդվածը, որի «Վերին և Ներքին Կարբինք» հատվածում նշում են. «Ստ. Օրբելյանի հիշատակած Հաբանդ գավառի գյուղացուցակից հայտնի են դառնում նաև Վերին և Ներքին Կարբինք գյուղատեղիները՝ ներկայիս Խնձորեսկ գյուղի հողատարածքում...»: Հնագիտական տարածքը բավականին մեծ է և հասնում է մինչև Զրնգանա ձորը: Մելորացիայի ենթարկված տարածքում այժմ պահպանվել է մի սյան մաս՝ մոտ 4 մ երկարությամբ, 1 մ տրամագծով, 6 անկյուն ունեցող բազալտե քար: Պարզ է՝ շինության սյան հատված է, այսինքն՝ տարածքում հավանաբար նաև եկեղեցի է եղել: Քարը հիմքերին ունի մոտ 10 սմ տրամագծով փոսորակներ: Մոտ 1 մ լայնությամբ ու կեսից ավելին հողի տակ գտնվող խաչքարը գրեթե կպել է սյան քարին: Իսկ մոտակայքում 10-ից ավելի խաչքարեր, դրանց բեկորներ ու տապանաքարեր կան: Մոտ 170 սմ երկարությամբ մի

խաչքար պահպանվել է ամբողջությամբ, սակայն ընկած է կողքի վրա՝ հենված երեսին պառկած մեկ այլ ավելի երկար խաչքարի: Երեսին 3 խաչ են քանդակված՝ շրջափակված «ասեղնագործ» գեղեցիկ քանդակով: Ներքին մասում անցք կա (հավանաբար պարանի համար): Մի խաչքարի կեսն է մնացել՝ երկարությունը մոտ 150 սմ, լայնությունը՝ 73 սմ: Մի քանի խաչեր կան երեսին քանդակված: Հարևանությամբ գտնվող խաչքարի չափերն են՝ երկարությունը՝ 123 սմ, լայնությունը՝ 80 սմ: Պահպանվել է ամբողջությամբ, ընկած է հողի վրա. անմշակ քարի երեսին մեծ խաչ է քանդակված: Մեկ այլ խաչքարի փոքր մասն է երևում, կեսից ավելին հողի տակն է, ունի 1 մ լայնություն: Նույն վիճակում է նաև հարևանությամբ գտնվող գեղաքանդակ խաչքարը, որի լայնությունը 110 սմ է, վերին հատվածը աղեղնաձև է: Զգացվում է՝ երեսին մեծ խաչ է քանդակված՝ ներփակված դարձյալ «ասեղնագործ» քանդակով: Վերին 2 անկյունում քանդակված է հավերժության խորհրդանիշը: Մոտ 120 սմ լայնություն ունի երեսին 2 խաչով խաչքարը, որի մեծ մասը դարձյալ հողի տակ է: Խաչերի ներքին հատվածը չի երևում, իսկ վերին և կողային թևերը եզրափակված են 2 կլորավուն քանդակով: Իրար նման 2 խաչքար էլ ընկած են կողք կողքի՝ մեծ մասը՝ դարձյալ հողի մեջ: Էլի կան խաչքարեր՝ հողի տակից հազիվ նշմարվող: Ցավոք, որևէ մեկի վրա արձանագրություն չկա, սակայն քանդակների ոճից պարզվում է՝ 12-13-րդ դարերի շիրմաքարեր են: Մոտակայքով է անցնում դաշտամիջյան ճանապարհը, որի հարևանությամբ կան կառույցների հիմքեր, պատաշարեր: Ժ. Ալեքսանյանն ասաց՝ երբ տարածքն հարթեցրել են, նաև կարասներ են հայտնաբերվել: Ունեցել են մեծ չափեր: Աշխատողներից մեկը, որ ունեցել է մոտ 190 սմ հասակ, մտել է ջարդված կարասի մեջ ու չի երևացել: Այսինքն՝ կարասները մոտ 3 մ խորություն են ունեցել:

Ինչպես ասում են, եղածը եղել է, մնում է տեր կանգնենք մնացած հուշարձաններին: Կարևորը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության համապատասխան կառույցները գոնե տեղում ցուցանակ տեղադրեն՝ գիտական ճանաչելի հոդվածով: Ինչ խոսք, կարևոր է նաև կատարվեն հնագիտական ուսումնասիրություններ ու պեղումներ:

ԱՅՍՏԵՂ ԵՂԵԼ Է ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

հետ»,- ասաց Գ. Սարգսյանը՝ հավելելով, արդեն ոգևորված, բացել են դղյակի միջանցքը, դահլիճը և այլ կառույցներ: Այդպիսով 2024-ին ավարտել են առաջին 1-ամսյա հնագիտական աշխատանքները: 2025թ. հուլիսից շարունակել են պեղումների աշխատանքը: Հուշարձանի տարածքում պահպանվել են բազում շինությունների հիմքեր, պատեր, ավերակներ: Առանձնակի ուշադրության է արժանացել թագավորական պալատը՝ միջնաբերդը: Այստեղ շինությունները տարբեր ժամանակների են: Ավելի ուշ կառուցված շինության տակ հայտնաբերվել են վաղ շրջանի (4-5-րդ դարերի) մեծ չափերով եռանավ բազիլիկ եկեղեցու հիմքեր, սյուների խարիսխներ, տրավերտինից պատրաստված 2 մեծ մույթ, սրբատաշ քարեր: Եկեղեցու պայտաձև խորանի վերջնամասի վրա հետագայում պատ են կառուցել: Ըստ հնագետի՝ բացված եկեղեցին մինչև վերջ չի կառուցվել, չի օծվել՝ կապված երևի քաղաքական իրավիճակների հետ: Ամեն դեպքում տեղում կա 2 շինարարական շերտ՝ 4-5-6-րդ դարերի եկեղեցու հիմքեր և 10-րդ դարի պալատական դղյակ: Կան այլ կառույցներ ևս, բայց հնագետներին հիմնականում հետաքրքրում են եկեղեցին և պալատը, որոնց

պահպանումը նրանց համար խնդիր է դարձել: Եթե եկեղեցին սկսել են կառուցել սրբատաշ տրավերտին քարով, ապա պալատը կառուցվել է այլ շինաքարով ու տեխնիկայով: Պալատի ներսում հետագայում այլ պատեր են ավելացել: Շինության հատակը եղել է սալապատ: Հետագայում մոտ 25 սմ լիցք է արվել ու նոր սալահատակ է կառուցվել: Հարևանությամբ բացվել է նաև ձիթհան՝ մոտ 1,2 մ տրամագծով քարով: Այսպես կոչվող պալատական համալիրի հյուսիսային մասը թեք լանջ է, իսկ հարավարևմտյան հատվածում տասնյակ շինությունների պատեր են, հիմքեր: Հնագետների կարծիքով այս կողմում եղել են բաղնիքներ ու այլ տնտեսական կառույցներ: Մոտ 30 մ հարավ կա մեկ այլ շինության ավերակ, որը եղել է փոքր չափերով մատուռ: Ունի ուղղանկյուն խորան: Ըստ հնագետ Գ. Սարգսյանի՝ այն ծառայել է արքային ու իր ընտանիքին: Իսկ տարածքի գլխավոր սրբատունը եղել է Վահանավանքը, որ Կապան մայրաքաղաքից հեռու է ընդամենը 3 կմ, և այնտեղ բոլորը ոտքով են գնացել՝ մասնակցելու հոգևոր տարբեր արարողությունների: Չնայած տարածքի՝ ամբողջովին անտառապատ ու մացառապատ լինելուն, զգացվում է բնակավայր-ամրոցատեղին եղել է պարսպապատ: Որոշ հատվածներում պարիսպները երկշերտ են: Նշված կառույցների արևելյան կողմում պահպանվել է երբեմնի հզոր աշտարակի մի հատվածը՝ մոտ 4մ բարձրությամբ ու ցլագլխի պատկեր քարով: Այստեղով է եղել ամրոցի արևելյան մուտքերից մեկը: Իսկ պալատական համալիրի գլխավոր մուտքը եղել է արևմտյան կողմից, որից քիչ հեռու անցնում է

Ողջի գետը: Աստիճանավանդակով մուտքը հասել է պալատի և հիշյալ փոքր մատուռի մեջտեղում եղած հրապարակ: Գ. Սարգսյանը տեղեկացրեց նաև՝ գետի ձախ ափին կա ավերակ աշտարակ, որը հավանաբար եղել է ամրոցը գետի ձախափնյա ճանապարհին կապող կամրջի մոտ: Իհարկե, կամրջից բան չի պահպանվել, բայց աշտարակի ներկայությունը դա է հուշում:

Հնագետների համար դեռևս պարզելու հարցեր շատ կան: Պեղումները շարունակվում են: Հնագետների հետ աշխատում է և աջակցում Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Ալյոշա Հայրապետյանը: Չափագրումները կատարում է վերականգնող ճարտարապետ Լևոն Վասիլյանը: Բանվորական անձնակազմը կապանցիներ են, ովքեր նաև առավել են ճանաչելու իրենց հայրենի երկիրը:

ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ

ԵՂՎԱՐԴԸ՝ ՆԵՐԿԱ ԵՎ ԱՆՑԱԾ ՊԱՏՄՈՒԹՅԱՄԲ

Պատմական Եղվարդը Մեծ Հայքի Սյունիք նահանգի Մյուս Բաղք կամ Քաշունիք գավառի գյուղերից է: Սյունիքի պատմիչը՝ Ստեփանոս Օրբելյանը, որը հարուստ տեղեկություններ է թողել իր և ավելի վաղ ժամանակների մասին, «Սյունիքի

պատմություն» գրքում՝ «Սյունիքի տասներկու գավառների եկեղեցու (խոսքը Տաթևի վանքի մասին է. *Զ. Ը.*) հարկացուցակը ըստ հին սահմանվածի» ՀԴ գլխում, Եղվարդը հիշատակում է Աղահորդ անունով՝ Մյուս Բաղք կամ Քաշունիք գավառի կազմում՝ 10 միավոր հարկով (էջ՝ 401): Այսինքն՝ դեռևս մոտ 1000 տարի առաջ այս բնակավայրը եղել է շեն ու մեծ գյուղ: Ռուսական կայսրության ժամանակաշրջանում էլ է գրեթե նույն Աղավուրդ անունով կոչվել: Մոտ 25 կմ հեռավորությամբ է ներկայիս Սյունիքի մարզկենտրոն Կապան քաղաքից: 2017 թվականից Կապան խոշորացված համայնքի կազմում է՝ հյուսիսարևելյան կողմում, անտառապատ տարածքում:

Օրերս աշխատանքային այցով Կապանում էի, վերականգնող ճարտարապետ Լևոն Վասիլյանի և հնագետ Գագիկ Սարգսյանի հետ այցելեցի նաև Եղվարդ: 2020թ. սեպտեմբերյան պատերազմից հետո գյուղը դարձել է սահմանամերձ, իսկ մինչ այդ՝ առաջնագծից հեռու էր հարյուր և ավելի կմ: Միևնույն է, եղվարդցին ապրում է իր հողում: Հանդիպեցի ու զրուցեցի գյուղի վարչական ղեկավար Սպարտակ Զաքարյանի հետ: 2005 թվականից ղեկավարում է Եղվարդը. 4 անգամ վերընտրվել է: 2017-ին նշանակվել է գյուղի վարչական ղեկավար, 2018 թվականին ազատվել է այդ պաշտոնից, աշխատել այլ տեղ: 2025-ին վերստին նշանակվել է գյուղի վարչական ղեկավար: Հայրենի ծննդավայրի զարգացումը, բարգավաճումը մշտապես է եղել Ս. Զաքարյանի հոգսը:

Եղվարդն այժմ ունի 78 ընտանիք՝ մոտ 270 բնակչով: Արցախյան 2023թ. բռնագաղթից փրկված 10 ընտանիք, մոտ 50 բնակիչ, վերաբնակվում է Եղվարդում: Այժմ շատ արցախցիներ են բնակվում Կապանի խոշորացված համայնքի կազմում գտնվող գյուղերում: Եղվարդում զրուցեցի նաև վերաբնակիչ-արցախցիների հետ: Ինչ խոսք, հայրենի տան կարոտն արցախցու սրտում է, վերադարձի հույսը՝ հոգու խորքում, բայց այստեղ՝ Եղվարդում, արդեն տեղավորվել են, կան աշխատողներ, ու բոլորն են գոհ եղվարդցիներից, գյուղի վարչական ղեկավարից, որը մշտապես նրանց կողքին է: Առաջին օրերին նաև նրա հարկի տակ են մնացել, գյուղի մշակույթի տանը:

Ս. Զաքարյանն այցի օրը նույնպես զբաղված էր գյուղի հոգսերով: Այս օրերին գյուղի ներքին մասում բարեկարգվում է Շենին աղբյուրի տարածքը: Գյուղի այս հարստությունից դարերով է օգտվել եղվարդցին. աղբյուրի ակունքի վրա պահպանվում է միջնադարյան կառույցը: Տարածքում կառուցվում է հանգստի գոտի: Խմելու ջրի խնդիրը բավարար է, սակայն ոռոգման ջուր չկա: Գետի համեմատությամբ գտնվելով բարձրադիր գոտում՝ ծովի մակարդակից 1040-1120 մ բարձրության վրա, առանց պոմպակայանի հնարավոր չէ ոռոգման ջուր ունենալը: Խորհրդային տարիներին ոռոգման ջուրը գյուղ հասել է նույն պոմպակայանով: Բնակչության խնդիրներից է նաև բնակավայրի գազաֆիկացված չլինելը: Եղվարդի միջնակարգ դպրոցում անցած ուստարում սովորել է 41 աշակերտ: Իսկ նախակրթարան-մանկապարտեզն ունի 10 սան: Բնակչությունը հիմնականում զբաղված է անասնապահությամբ, մեղվաբուծությամբ, հողագործությամբ: 2020թ. սեպտեմբերյան պատերազմի պատճառով արոտավայրերն ու խոտհարքերը համեմատաբար պակասել են: Այս պատճառով մոտ 70 տոկոսով կրճատվել է անասնագլխաքանակը: Վարելահողերը մշակվում են՝ չնայած մոտ են սահմանին: Ս. Զաքարյանը, խոսելով գյուղի անցյալի մասին, ասաց՝ 1730 թվականին՝ Դավիթ Բեկի ազատագրական պատերազմից հետո, պարսից շահի հրամանով Եղվարդն ավերվել է, բնակչությունը տեղահանվել և աքսորվել է Պարսկաստանի Ղարադաղի Վինա գյուղ: Պատճառը՝ ազատագրական պատերազմի ժամանակ աջակցել են Դավիթ Բեկին ու նրա զինակից Չավնդուրի իշխան Թորոսին, եղել են ապստամբ: Եվ միայն 100 տարի անց՝ Թուրքմենչայի պայմանագրի համաձայն, Աղահորդ-Եղվարդ բնակավայրի բնակիչների ժառանգները՝ 54 ընտանիք, վերադարձել են պապենական տուն ու վերահայացրել: Այդ ժամանակից մինչ օրս Եղվարդում միայն հայեր են բնակվում:

Գյուղի կենտրոնում է գտնվում հնադարյան գերեզմանոցը, որի տարածքում կանգուն է Սուրբ Աստվածածին եռանավ բազիլիկ եկեղեցին՝ կառուցված 1700 թվականին: Նույն գերեզմանոցում է ամփոփված նաև Թորոս իշխանի մարմինը: 1725 թվականին Չավանդուր գավառի կենտրոն Եղվարդ գյուղից մոտ 9 կմ արևելք ընկած Շուշաննե-ի դաշտում Թորոս իշխանի հրամանատարությամբ գործող Դավիթ Բեկի ջոկատներից մեկի և Ֆաթի-Ալի խանի զորքերի միջև տեղի ունեցած ճակատամարտում զոհվել է նաև Թորոս իշխանը: Եվ այս հերոսի՝ Եղվարդ գյուղում հուղարկավորված լինելը առիթ է հանդիսացել, որ «Երկիր և մշակույթ» կազմակերպությունը 2007-2011թթ. նորոգել է Սբ. Աստվածածին եկեղեցին ու բարեկարգել տարածքը:

Գյուղի կենտրոնում կանգուն է նաև Մեծ

Հայրենականում նահատակված եղվարդցիներին նվիրված հուշարձանը: Երկու սալաքարի վրա 105 զոհվածի անուն է քանդակված: Հարևանությամբ Արցախյան պատերազմներում զոհվածների հուշախաչն է: 2020թ. սեպտեմբերյան պատերազմում գյուղից զոհվել է 20-ամյա Գոռ Անդրեասյանը: Ռմբակոծության պատճառով խաղաղ բնակիչ էլ է զոհվել:

Եղվարդում են ծնվել ՀՀ վաստակավոր արտիստ, Կապանի թատրոնի նախկին ղեկավար Կամո Արզումանյանը, դերասանուհի Նատալյա Բաղդասարյանը, գինեգործ, կենսաքիմիկոս, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սլավիկ Հարությունյանը, իրավագետ Բագրատ Ջնղունանցը: Եղվարդից Կապան ենք վերադառնում համայնքային Ագարակ, Խդրանց, Վարդավանք և այլ գյուղերով, անտառապատ ու ոլորապտույտ ասֆալտապատ ճանապարհով:

ՍԵՎ ՍԱՐԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆԻ ՔԱՐԱՇԱՐՔԸ

Սևանա լճի հարավային կողմում՝ Վարդենիսի լեռնաշղթայի հարավարևելյան հատվածում է Սև սար կոչվող լեռնագագաթը (բարձրությունը՝ ծովի մակերևույթից 3063 մ): Լեռան հյուսիսարևելյան ստորոտում՝ ծովի մակերևույթից 2500-2700մ բարձրության վրա, մեծ հատվածում (ավելի քան 70հա տարածք), կան ժայռապատկերներ, բնակավայրի հետքեր, դամբարաններ, հնադարյան մարդու թողած այլ հետքեր: Հնավայրում առավել կարևոր է մի շարք գիտնականների կողմից որպես աստղադիտարան նշված 3 քարերի համալիր ժայռապատկերը: Կենտրոնական քարը, որի վրա տարբեր պատկերներ են քանդակված, ուսումնասիրողների կողմից համարվում է երկնքի քարտեզ: Իհարկե, կարծիքները տարբեր են, բայց մոտ 6 ք/մ մակերեսով քարի վրայի քանդակները ցանկացած մարդու հուշում են՝ այն իր ժամանակի կարևոր գիտական կենտրոններից է եղել, և միակն է ողջ Հայաստանում, հնարավոր է՝ ամբողջ աշխարհում:



Իմ ծննդավայր Գեղհովիտ գյուղի վարչական տարածքում է հնավայրը, որտեղ եղել եմ մանկությանս տարիներից: Լուսահոգի Մարգար պապս, որը հովիվ էր ու ոչխարի հոտը հիմնականում այս հատված էր տանում, հաճախ էր հիշատակում Սև սարի աստղադիտարանի մասին: Երջանկահիշատակ հայրս էլ հպարտությամբ էր խոսում, որ մեր բնակավայրի տարածքում կա հնադարյան գիտական կենտրոն-աստղադիտարան:

Երեք քարաբեկորները, որոնց վրա է համալիր քանդակը, գտնվում են մեր՝ տեղացիների կողմից «Կազոնի գուփ-փոս» կոչվող լայնահուն ձորակի հարավարևելյան ոչ բարձր բլրակի վրա: Տարածքում կան տասնյակ այլ ժայռապատկերներ: Բացի աստղադիտարանից, որն հնավայրում հիմնականում այցելուների և ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է, կան ուսումնասիրման ենթակա այլ օբյեկտներ ևս: Հնավայրում շատ են հրաբխից առաջացած քարացրոնները, մեր խոսվածքում՝ խնջիկները: Հին ժամանակներում էլ մարդը նշված խնջիկներն օգտագործել է տարբեր նպատակներով: Որոշ քարերի վրա պատկերներ է նկարել, ավելի մեծ չափերով քարասալերն օգտագործել է որպես փոքր խցերի ծածկ: Երբ շրջում էի խնջիկներում, մի քանի նման պատկեր հանդիպեցին՝ մոտ 10 ք/մ մակերեսով քարերը դրված են շարված խցերի վրա: Իմ կարծիքով, խցերը եղել են ապաստարան կամ՝ դամբարան-դոմլեն: Կան քարեր, որ մշտապես ենթարկվելով կայծակի հարվածին, բավականին հարթ ու կապտավուն մակերես են ստացել: Որոշների վրա կան ջրահավաք փոսորակներ:

Տարիներ առաջ երջանկահիշատակ քեռուս ուղեկցությամբ դարձյալ հնավայրում էի: Սև սարի հյուսիսարևելյան ստորոտում է գտնվում մեր գյուղի Զոզներ կոչվող ամառանոց-յայլան, որտեղ ամռանը գալիս էին անասունները պահելու նպատակով: Ցավոք, մի քանի տարի է՝ արդեն ամայի է Զոզները: Քեռիս էլ ամառներն այստեղ էր անցկացնում ու լավ

տեղյակ էր հնավայրի ժայռապատկերներից: Նրա ուղեկցությամբ գտանք ժայռապատկերները, լուսանկարեցի: Հնավայրի տարածքում կան նաև բավականին մեծ չափերով քարաժայռեր: Նույն օրը բարձրացանք նաև Սև սարի գագաթը, որտեղից երևում է Սևանա լճի ավազանի մեծ մասը, Արարատ լեռը, այլ տարածքներ: Ու գագաթից մի հետաքրքիր տեսարան նկատեցի: Նշված քարաժայռերի մի շարան՝ 6 քար, գտնվում է մի շարքի վրա՝ միմյանցից գրեթե հավասար հեռավորությամբ: Առաջին հայացքից՝ քարեր են ծորալանջի:

Այս տարի Վարդավառի օրը դարձյալ Գեղհովիտում էի, ու սովորության համաձայն հարազատներիս հետ բարձրացանք Սև սար՝ աստղադիտարան: Նշված քարերը գտնվում են աստղադիտարանից հյուսիսարևելք՝ Կազոնի գուփ ձորակի հարավային լանջին՝ արևելք-արևմուտք ուղղությամբ: Վերջին՝ արևմտյան քարը, որը մնացածից համեմատաբար ավելի մեծ է, տակը պատվանդաններ ունի: Երկու մեծ քարի վրա է: Կրտսեր եղբորս որդին՝ Միերը, հանգիստ անցավ քարի տակով, իսկ ավագ եղբորս թոռնուհին՝ Մերին, ուրախ-ուրախ կանչեց. օձի քանդակ էր տեսել մոտակա քարին: Հողի մեջ է օձաքանդակ քարի մի մասը, իսկ վերին հատվածում օձ-վիշապ է քանդակված: Հետաքրքիր է՝ նույն օձի քանդակը կա նաև աստղադիտարանի գլխավոր քարի արևելյան կողմի, այլ քարերի վրա: Մեծ քարերի շարանը նույնպես պետք է դառնա ուսումնասիրման առարկա: Հնարավոր չէ, որ քարերը բնականորեն են նույն շարքում հայտնվել, ու վերջինն ունի պատվանդան, որի

ունեն պատվանդան և տակով հնարավոր է անցնել: Աստղադիտարանի քարերին արեգակնային ժամացույցի՝ 12 ժամի քանդակն է: Նշված Կազոնի գուփ ձորակի հյուսիսային լանջին մի ժայռ կա, որի վրա դարձյալ եռաշարք 12 փոսորակ է քանդակված: Գիտնական-ուսումնասիրողների գործն է՝ ճշտել՝ այս քարը կապ ունի՞ աստղադիտարանի հետ: Ամեն դեպքում հավատացած եմ՝ աշխարհում եզակի այս հնավայրը, որի կենտրոնական հուշարձան-աստղադիտարանը, ըստ գիտնականների, ունի մոտ 18 հազար տարվա պատմություն, լուրջ ուսումնասիրման ու առավել հոչակման կարիք ունի:

Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՁԱՅՆԵՐ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ

ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ Է ՀԵՂԻՆԱԿԸ

Ես Մարտա Բաբայանն եմ, 22 տարեկան, ծնվել և մեծացել եմ Արցախում՝ Ստեփանակերտ քաղաքում: Սովորել եմ Հովհաննես Թումանյանի անվան թիվ 9 հիմնական, ապա Վիտալի Ջհանգիրյանի անվան թիվ 11 ավագ դպրոցում:

2021 թվականին ընդունվել եմ Արցախի պետական համալսարան՝ կենսաբանություն և քիմիա մասնագիտությամբ: 2023 թվականի պատերազմից հետո ուսումս շարունակել եմ Վանաձորի պետական համալսարանում՝ մանկավարժական կենսաբանություն մասնագիտությամբ, որն ավարտել եմ գերազանցությամբ և ընդունվել եմ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մագիստրատուրա՝ «Կենսաբազմազանության ուսումնասիրություն և պահպանություն» մասնագիտությամբ:

Մասնակցել եմ մի շարք ուսանողական գիտաժողովների՝ ներկայացնելով գիտական աշխատանքներ, որոնցից երեքը երաշխավորվել են տպագրության, մեկը՝ արդեն տպագրվել է «ՎՊՀ-2024թ. գիտաժողովի նյութեր» ժողովածուի հերթական համարում:

Ստորև ներկայացված են ավելի մանրամասն տվյալներ այդ մասին:

• 2023թ. ԱրՊՀ – «Արցախի դենդրոֆլորայի դեղատու տեսակները» (երաշխավորված է տպագրության)

• 2023թ. ՎՊՀ – «Արցախի դենդրոֆլորան, նրա պահպանության հիմնախնդիրները» (երաշխավորված է տպագրության)

• 2024թ. ՎՊՀ – «Հայկական մեղրի որոշ նմուշների որակական ցուցանիշների որոշումը» (տպագրվել է «ՎՊՀ ուսանողական գիտաժողովի նյութեր» ժողովածուի հերթական համարում)

• 2025թ. ՎՊՀ – «Միկրոկանաչիների վիտամինային պարունակության համեմատություն դրանց հասուն համարժեքների հետ» (երաշխավորված է տպագրության):

Բացի գիտական գործունեությունից, սիրում եմ նկարել, ստեղծագործել ու գրել բանաստեղծություններ: Իմ նպատակն է արժանի ներդրում ունենալ Հայաստանի գիտական և կրթական ոլորտում

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռեքվիեմ

Մենք կորուստներ շատ ունեցանք,
Պատերազմի անգութ դաշտից.
շատ-շատերը տուն չդարձան:
Մի լուռ մանուկ, աչքը ճամփին
Հոր գալուն է կարծես սպասում:
Խոստացել էր, որ տուն գալուց,
քաղցր կոնֆետ է բերելու:
Սակայն, ավա՜ղ, հոր խոստացած,
կոնֆետները նա չստացավ:
Ու շատ մայրեր, որ երազում,
թոռանն էին ամուր գրկում,
Կորած որդու նկարն առած,
Մի վերջին հույս սրտում պահած,
Դռան զանգին են սպասում:
Գուցե նա գա,
Գուցե ինչ-որ խուլ անտառում
Նա տան ճամփան է որոնում:
Սակայն, ավա՜ղ, որդին վաղուց,
տան ճամփան էլ չէր որոնում:
Մի օրիորդ էլ կա,
որ երկնքում անվերջ
մի վառ աստղ է փնտրում:
Նրան էլի իր երազում
սիրելին է լուռ այցելում:
Նա բերում էր խամրած նամակ
Մեջը՝ դաշտից քաղած կակաչ,
Չորացել է այն շատ վաղուց,
Արյունոտվել, ու վառոդի
անդուր հոտն էր իր մեջ առել:
Իսկ նամակում իղձեր կային՝
Երկար սպասված, չասված բառեր...
որոնք գուցե ժամանակին,
թե ասվեին սիրելիին,
կյանքի իմաստ կդառնային,
Պայքարելու ուժ կտային,
Կյանքից կառչած կպահեին:
Մի պապիկ էլ աղոթում էր,
Որ տառապած, պատերազմի խարան առած,
սուր փամփուշտից խորը ծակծկված,
հազար տեսակ ցավից կոփված՝
իր մարմինը մի օր սառած,
Օտար հողին բաժին չդառնա:

Մարիոնետ

Մենք տեսնում ենք, բայց չենք նկատում:
Մենք լսում ենք, բայց չենք ընկալում:
Ընկալածն էլ հաճախ ճիշտ չենք հասկանում:
Քայլում ենք, ինչպես մի կույր խաղացող,
Խաղում ենք, ինչպես լոկ մի մարիոնետ,
Ապրում ենք կիսաքուն կամ կիսարթուն:
Թվում է՝ կյանքը խաղ են դարձրել,
աշխարհը՝ խաղադաշտ,
մարդկանց՝ խաղաքար:
Խաղում են ինչ-որ անորոշ մարդիկ:
Հաճախ փորձում են մեզ և կամ փորձարկում,
Ինչպես մեխանիկը՝ մի նոր հնարած սարք:
Խառնում են նրանք մտքերը մեր քաոս,
ուղղորդում դրանց ըստ նպատակի,
Ու մեզ դարձնում ստանդարտ խաղալիք:
Որքան քաղքենի կյանքն անհատի,
այնքան հեշտությամբ կդառնա նա գերի:
Հաճախ կոտրվում են խաղալիքներն այդ,
զոհում են նրանց, անխիղճ, անողոքաբար:
Ցիտատ են հրապարակում, մարդկանց կուրացնում,
ասում՝ նպատակը միջոցն էլ է արդարացնում:
Թվում է՝ կարծես մարդկային կյանքը,
վաղուց է արդեն արժեքն իր կորցրել:
Խաղադաշտն էլ արդեն վաղուց է մասնատվում:
Ամեն մեկն իր բաժինն է մեծացնում,
բայց բաժնից առաջ շահն է առաջադրվում:
Մեկը նվիրում է հանուն այդ շահի,
մեկը գրավում, երբեմ էլ խլում:
Խաղում են ինչ-որ անծանոթ մարդիկ,
Աշխարհի տեր են իրենց հռչակում,
Կառավարում միտքը՝ մարդկանց միամիտ,
Աշխարհը զոհաբերում հանուն անհատի:

Մենք նույն մոլորակից ենք, Բայց տարբեր աշխարհներից

Մենք նույն մոլորակից ենք,
բայց տարբեր աշխարհներից:
Ապրում ենք նույն երկնքի տակ,
բայց տարբեր հարկերում,
Քայլում նույն հողի վրա,
բայց տարբեր գին վճարում:
Մենք նման ենք իրար,
Եվ նույնքան տարբեր:
Տարբեր կյանք ունենք,
Տարբեր ճակատագրեր:
Բայց նույն Աստվածն է բոլորիս ստեղծել:
Մեր նախահայրը Ադամն է եղել,
Իսկ նախանյութը՝ հողից է սերվել:
Մենք հարազատ ենք և նույնքան օտար:
Եվ կար ժամանակ, երբ ատոմները մեր
իրար են բախվել, իրար ճանաչել՝
նույն մատերիայի մասնիկն են կազմել:
Բայց այսօր արդեն հեռու են դրանք:
Եվ բաժանվեցին աշխարհները մեր:
Տարբերակվեցին ճակատագրերը՝
Խիստ օտարացան մերձավոր մասնիկները:
Մեր ճանապարհները հաճախ են խաչվում,
Բայց գրեթե երբեք չեն միահյուսվում:
Հարուստն իր անհոգ կյանքն է վայելում,
Աղքատը՝ տանջվում, հոգսերից մաշվում:
Մեկը շոկոլադը աղբամանն է նետում,
Մյուսը՝ նույն տեղում մի կտոր հաց փնտրում:
Մեկն այնքան շատ ունի՝ փողից անձրև է ստեղծում,
Մյուսը անձրևանոցի պակասից է նեղվում:
Մինչ գիտունը տքնաջան լուծում է փնտրում,
Անգետը անընդհատ խնդիրներ է ստեղծում:
Մինչ զինվորը անքուն սահմանն է պահում,
Նախագահը անընդհատ կայծեր է բռնկում:
Մեկին ազատության տենչանքն է տանջում,
Մյուսին այն փչացնում, խելագար դարձնում:
Մեկն ամեն ինչ ունի, բայց ոչինչ չի տեսնում,
Մյուսն՝ անգամ անտեսանելին է տեսնում:
Մեկը կոտրվում է մի նետված քարից,
Մյուսն իր մեջքին ժայռեր է շրջում:
Գուցեև մեկը, ով ժպտում է դեմքիդ,
Մեջքիդ հետևում ծուղակ է շինում:
Գուցեև մռայլ, դժգոհ մեկ ուրիշն էլ,
Հենց այդ ընկերոջ ծուղակն է քանդում:
Մարդիկ տարբեր են՝ անկանխատեսելի,
Իրար շատ նման, բայց խիստ յուրօրինակ:
Մենք նույն մոլորակից ենք
բայց տարբեր աշխարհներից:

Փոշիացած անուրջներ

Կուզեի երևակայությունը
մի օր իրականություն դառնար,
Եվ այն ճանապարհը, որ օրերով անցանք,
Թռիչքային արագությամբ մեզ տուն հասցներ
Հարազատ սարերը մեզ դիմավորեին:
Եվ ուրվականները քաղաքը լքեին:
Ու դիմակ հագած, կերպարանափոխված,
Հազար ցավ տեսած, քաղաքները մեր լքված,
վերականգնեին դեմքը վաղուց կորցրած:
Երկնքի ֆոնին, որպես հաղթանակ,
Ծածանվեր դրոշը մեր արցախյան:
Գմբեթին կրկին Սուրբ Խաչը փայլեր,
Եկեղեցու զանգն էլ,
մեզ էլի տուն կանչեր:
Կուզեի քարը քարի վրա դրվեր,
Ու տունը ավերված կրկին շինվեր,
Գյուղ-քաղաքները մեր նորից շենանային:
Խաղա՜ղ, անմոռաց գիշերային երկնքի տակ,
Վառվեին լույսերը վաղուց անջատված:
Եվ աչք շոյեր պատկերն այդ հիասքանչ:
Փոշին չքանար մեր տան սեղանից:
Տաք թեյի բույրը տան օդ օծեր:
... Ես տանը լինեի այդ ժամ անպայման,
Այգի գնայի և ըմբոշխնեի օդը մեր հարազատ:
Թթենու ծառից ճոճանակ կախեի
Եվ փոշիացած հուշերը իմ վառ
այդ օրն անպայման կենդանանային:

Սեգ սարերը սպասում էին դեռ

Մի գարուն էլ անցա՛վ, գնաց,
Սեգ սարերը զմրուխտ հագան,
Մեր պտղատու այգիները,
Ամեն տեսակ ծաղիկ առան,
Զարդարվեցին, պճնվեցին,
Բերք-բարիքի բուրմունք առան:
Կարծես կրկին՝ լեռները մեր
Հարսանիքի էին սպասում,
Սպասում էին Ղազանչեցոց՝
Մեր սուրբ վանքի զանգ-ղողանջին,
Որ մեր Շուշվա վեհ բարձունքից,
Իր կանչերով հնչեղ ու հին՝
Մի նոր սկիզբ էլ կազդարարեր:
... Սպասում էին հարսնացուին,
Ով շփոթված ու տառապած,
Դարդ ու ցավից արցունքոտված,
կոտորածի բիրտ բույրն առած,
Ստիպված լքեց սարերն իր հարազատ:
Սպասում էին փեսացուին,
Որն այդ դաժան, մութ օրերին՝
Իր զենքն առավ, դիրքեր գնաց,
Ու խոստացավ, որ հետ կգա....
Գուցե մի օր իրոք կգա:
... Այգիները մեր զարդարված՝
Սպասում էին կարծես կրկին:
Կարծես, նորից մանուկները
Խինդ-ծիծաղով չարաճճի,
Բերք քաղելու էին գալու:
Ու երկինքն էլ խաղաղ էր այնպես,
Մեր մանկության հին օրերի պես,
Կարծես նա չէր, որ փլվել էր
Պատերազմի սուր հարվածից,
Կարծես նա չէր, որ զրկվել էր
Թռչունների մեղմ դայլայլից,
Կարծես նա չէր, որ ողբագին՝
չար ոսոխի ձեռքով կրկին,
հուր-կրակ էր թափում մեր գլխին:
... Ձի՛նջ, աստղազարդ երկնքի տակ,
Մեն-միայնակ, տոկուն կանգնած՝
Տատն ուՊապն էլ սպասում էին դեռ...
Կարծես մի օր, ահավասիկ
«Բարի գալուստ մեզ կասեին»....

***

Ճակատագիրը մեզ իրարից հեռացրեց,
Բախտի քամին էլ տարբեր ափեր քշեց,
Կյանքը պայքարել մեզ սովորեցրեց,
Դարդը՝ դիմանալ,
Ցավը՝ հասկանալ, որ
կույր աշխարհում
Ամեն մեկը լոկ
Իր խղճից զատված՝
Միշտ շահն է փնտրում:
Մի օրում հանկարծ,
Տունը՝ տաճար դարձավ,
Երկիրը՝անհաս դրախտ,
Սև օրվա հացն էլ՝ երկնային մանանա:
Սուր կորուստը մեզ դաժան դաս տվեց,
Ու սովորեցրեց, որ
Կյանքն անկնթարթ է
Ու կարճ է տևում,
Այն, ինչ երեկ թանկ էր,
Այսօր արժեք չունի,
Իսկ այն, ինչ անտեսվում էր
Այսօր կյանքի գին ունի:
Մեր սրտից քամված
արյուն-արցունքը՝
Մուգ թանաք դարձավ
Կյանքի էջերին:
Մթում ցնորված, մեր ծով մտքերից՝
Գիշերն էլ սկսեց տողեր թելադրել:
Եվ այսպես ծնվեց պոետը խավարում:

***

Միշտ արձագանքող մի
Հզոր ձայն կա հայոց լեռներում:
Խիստ ոգեշնչող, հոգին պարուրող,
Միտքը արթնացնող, սիրտը հագեցնող,
Մեր պարտքի մասին մեզ միշտ հիշեցնող՝
մի հզոր ուժ կա զմրուխտ սարերում:
Իրենց դարավոր կյանքի ընթացքում՝
մեր հաղթանակի ու մեր պարտության
անխոս վկան են նրանք միշտ եղել:
Գուցե հենց դա է վեհություն ծնել,
որը հպարտության առիթ է դարձել,
պատմությունը շարունակելուն՝ իմաստ հաղորդել,
Կորցրածը վերադարձնելու երազանքը ստեղծել:

☞8

ՕԳՏԱԿԱՐ Է ԻՄԱՆԱԼ

ԱՐԴՅՈՐՔ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՆ ՍՏԱՏԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սարմինը մարզելու տարբեր համակարգերի մեջ գոյություն ունեն ստատիկ վարժություններ, որոնք սիրված են շատ մարզվողների կողմից, քանի որ «ձգում են» ամբողջ մարմինը՝ աշխատանքի կոչելով մկանների հիմնական խմբերը:

Ստատիկան լայնորեն կիրառվում է ֆիթնեսում: Դրա տակ հասկանում են այն ծանրաբեռնվածությունը, որի դեպքում մկանը (կամ մկանները) պահպանում է որոշակի երկարություն: Այսինքն՝ մկանը ծանրաբեռնվում է, բայց չի կծկվում. չի մեծանում եւ չի փոքրանում, ինչպես օրինակ՝ դինամիկ վարժությունների կատարման ժամանակ: Ստատիկական վարժությունները շարժում չեն պահանջում, դրա համար էլ այդ վարժություններն անվանում են նաեւ իզոմետրիկ:

Մկանային մանրաթելերը լինում են դանդաղ եւ արագ: Արագ (կամ սպիտակ) մանրաթելերը մասնակցում են ինտենսիվ դինամիկ վարժությունների կատարման ժամանակ: Դանդաղ (կամ կարմիր) մանրաթելերը օգտագործվում են ստատիկ ծանրաբեռնվածության ժամանակ, որոնց առանձնահատկություններից մեկն այն է, որ որպես էներգիայի աղբյուր՝ դրանք գլխավորապես օգտագործում են օրգանիզմի ճարպերը:

Դրանով է պայմանավորված մարզանքի ծրագրի մեջ այդ վարժությունների ներգրավմամբ ստացվող առավել արդյունավետությունը: Եթե նպատակ ունեք ֆիթնեսի միջոցով կարգավորել մարմինը, ապա ստատիկ վարժություններով (եթե օգտագործեք միայն սեփական մարմնի քաշը եւ գորգիկ, առանց լրացուցիչ սարքավորումների) արդյունքը կարող է ավելի արագ ստացվել:

Կա ուրիշ նպատակ, որին հասնելու համար եւս օգնում են ստատիկական վարժությունները: Դա դիմացկունության զարգացումն է: Այդ հատկությունը հատկապես արդյունավետ է մարզվում ստատիկայում հաճախ միաժամանակ աշխատող մկանների մի քանի խմբերի հաշվին:

Կարող են լինել որքան դինամիկական, նույնքան էլ ստատիկական վարժություններ: Յուրաքանչյուր դինամիկական վարժություն կարելի է վերածել ստատիկականի: Օրինակի համար դիտարկենք դասական կքանիստը: Ստատիկ ռեժիմով դա ելման դիրքի ընդունումն է ամենացածր կետում կամ նիստի առավելագույն ամպլիտուդի մեկ երրորդում, իսկ հետո այդ դիրքում մնալը (շուրջ մեկ րոպե) առանց լրացուցիչ քաշի: Մյուս տարբերակը «անկյունիկ» կոչվող վարժությունն է, որը նույնպես կքանիստ է, տարբերությամբ, որ մեջքը պետք է հենել պատին: Պետք է իջնել այնքան, մինչեւ որ ուղիղ անկյուն ստանանք ծնկների ծալվող մասում ու պահենք այդ դիրքը՝ մինչեւ կզգանք մկանների թեթեւակի այրոց:

Եթե ձեզ հայտնի է միայն «պլանկա» (ձողիկ) վարժությունը, ուրեմն կարելի է բազմազանություն մտցնել այդ վարժության տարբերակների մեջ: Օրինակ՝ կատարել կողային «պլանկա» կամ հակառակ «պլանկա», որը նշանակում է հենվել ափերի վրա մեջքով դեպի հատակը: Դրանից բացի կա-

րելի է փորձել հետեւյալ վարժությունները.

«Անկյունիկ»՝ նստած:

Այս վարժությունը կատարելու համար պետք է նստել հատակին, բարձրացնել ոտքերը 45º անկյան տակ, իսկ ձեռքերը ձգել առաջ: Մեջքը ուղիղ պահել:

«Նավակ»:

Փորի վրա պառկած դիրքում ձեռքերը պարզել առաջ, բարձրացնել ոտքերն ու

ձեռքերը միաժամանակ եւ պահել այդպես որոշ ժամանակ:

Ստատիկական ծանրաբեռնվածության օրինակներ կարող են լինել յոգայում կատարվող շատ վարժություններ, մասնավորապես «զինվոր 1» եւ «զինվոր 2» վարժությունները: Ուժային վարժությունները նույնպես կարելի է լրացնել ստատիկական ծանրաբեռնվածությամբ: Կատարելով բիցեպսի ծալում դինամիկայում, կարող եք ավելացնել ծանրածողի կամ գանտելի պահում մոտ 90º անկյան տակ: Ստատիկական ռեժիմը կարող է օգտագործվել նաեւ ճկունությունը զարգացնելու համար կատարվող մարզանքի ժամանակ:

Ստատիկական վարժությունները կատարելու համար պետք է հետեւել կանոններին: Սկզբում պարտադիր է նախավարժանք կատարելը, որից հետո միայն կարելի է ստատիկ վարժություններին անցնել: Առաջին հերթին անհրաժեշտ է նախապատրաստել մարմինը, տաքացնել այն, ձգվել դինամիկական ռեժիմով: Այնուհետեւ կարգավորել շնչառության տեմպը, որպեսզի ստատիկի ժամանակ շունչը չպահվի ու ազատ շնչելու հնարավորություն լինի:

Ձգումներ կատարելը կարեւոր է: Նրանք, ովքեր սիրում են ստատիկական վարժություններ, պետք է հաշվի առնեն, որ դրանք նվազեցնում են մկանների ճկունությունը: Այն ստատիկական վարժությունները, որոնք զարգացնում են ճկունությունը, այլ կերպ են աշխատում: Այդ դեպքում մկանները պահվում են արդեն իսկ երկարացված դիրքում, ինչն էլ թույլ է տալիս բարելավել ձգվածությունը:

Վնասվածքավտանգության պրոֆիլակտիկայի համար կարեւոր է ստատիկայից հետո կատարել ձգումներ: Դա հնարավորություն կտա վերականգնել մկանները, նորից ակտիվացնել արյան շրջանառությունը, նվազեցնել ոչ այնքան հաճելի զգացողությունը, որն առաջանում է ստատիկ լարվածության արդյունքում: Այդ նույն պատճառով էլ ավելի լավ է հերթափոխել ստատիկ եւ դինամիկ վարժությունները, այլ ոչ թե կառուցել մարզանքը միայն ստատիկ վարժությունների վրա:

Շարունակականություն: Ստատիկական վարժությունների կատարման համար ամենաօպտիմալ ժամանակը 40 վայրկյանից մինչեւ 1 րոպե պահելն է: Անհատական առանձնահատկություններից կախված՝ այդ ժամանակը հնարավոր է ավելացնել կամ նվազեցնել:

Հակացուցումներ: Ստատիկական վարժությունները չեն երաշխավորվում այն մարդկանց, ովքեր ունեն սիրտանոթային համակարգի հետ կապված խնդիրներ, օրինակ՝ բավականին բարձր զարկերակային ճնշում: Նման դեպքերում ստատիկ վարժությունների կատարման ժամանակ սրտամկանը կարող է գերլարվել ու առաջացնել առիթմիա: Ստատիկական ծանրաբեռնվածությունը պետք է թոթափել, եթե առաջանում են խփոց գլխում, քունքի շրջանում բաբախումներ, աղմուկ ականջներում, գլխապտույտ:

Ավել քաշի դեպքում ստատիկ վարժությունը չպետք է կատարել՝ պահելով այն ավելի քան 40 վայրկյան: Ավելի լավ է կատարել վարժություններ նստած կամ պառկած ելման դիրքից:

Բոլոր դեպքերում կարեւոր է ստատիկական վարժությունները համապատասխանեցնել անհատական առանձնահատկություններին՝ ընտրելով մարմնի համար առավել անվտանգ վարժություններ: Իհարկե, ավելի լավ է դրանք կատարել մարզչի օգնությամբ: Բայց եւ զգույշ մոտեցման դեպքում ինքնուրույն մարզումները նույնպես դրական արդյունքը չեն բացառում:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Արցախի բանահյուսություն

ԱՍՈՒՅԹՆԵՐ

Սկիզբը՝ նախորդ համարներում

354. Անե Հուրին, ծաղկե Փյուրին:- *Անի Հուրին, ծաղկի(վայելի) Փուրին:*

355. Էշին ըրած, ծիին կերած:-*Էշի աշխատած, ձիու կերած:*

356. Մոշը հըսնելավ սըվանում ա, մազը՝ սիպտակում:-*Մոշը երբ հասնում է, սևանում է, մազը՝ սպիտակում:*

357. Ծակ վըդրումը ճյուր չի կենում, ծակ կըլխումը՝ խելք:-*Ծակ դույլում ջուր չի մնում, ծակ գլխումը՝ խելք:*

358. Խոխան հորավը եթիմ չինիլ, մորավը եթիմ կըինի:-*Երեխան հորով չի որբ լինում, մորով է որբ:*

359. Աշուղեն խաղը վըեր պրծնում ա, նեյնիմ-նեյնիմն ա ըղնում:-*Աշուղի խաղը երբ վերջանում է, նեյնիմ-նեյնիմն է ընկնում:*

360. Օգում ըս շալվար կյենաս, վեռետ նի չի կյա՞: -*Ուզում ես շալվար հագնել, հետույքիդ չկպչի՞:*

361. Ծյունին տակեն յեխտը կյարունքը պեց կըինի:-*Ձյան տակի կեղտը գարնանը կբացվի:*

362. Չինավ հոնձ անողը, սամավ էլ հոնձ կանե:-*Մանգաղով հունձ անողը սամնով էլ կհնձի:*

362. Վըեննըտ յորղանըտ ըգյորա մեկնե:-*Ոտքդ վերմակիդ չափով մեկնի:*

363. Կյառնը կյուլին պահ չըն տալ:-*Գառը գայլին պահ չեն տա:*

364. Մըեծ-մեծ տըներ, տուզնը՝ շըներ:-*Մեծ-մեծ տներ, քաղցած շներ:*

365. Շատ ծրծաղեն վըերչը լաց կըտեռնա: -*Շատ ծիծաղին վերջը լաց կլինի:*

366. Ուրուշու ծին եր ինողը ճելլի վըեր կըկյա:- *Ուրիշի ձին նստողը շուտ կիջնի:*

367. Էծին քամակն ա պըեց, վըխճարեն հավան չի կըենում:- *Այծի քամակն է բաց, ոչխարին չի հավանում:*

368. Կոտրած քըթոլյու նման խուսկեն մաչը չըն ըղնել:- *Կոտրած գդալի նման խոսքի մեջ չեն ընկնի:*

369. Կըկողան մին տյուս կըկյա, պըենդան՝ երկու: -*Կակուղից մեկ դուրս կգա, պինդից՝ երկու:*

370. Ծոխը ամեն հուրթավ էլ եր կընցնե:-*Ծուխը ամեն երդիկով էլ կբարձրանա:*

Շարունակելի

Ադելա/Արշալույս/ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀԱՐՍԱՆԻՔ ԼԵՌՆԵՐՈՒՄ»

7

Նկարը պարունակում է խորապես խորհրդանշական գաղափարներ: Երկնքի դեղնավարդագույն երանգները խորհրդանշում են սպասված արշալույսը՝ հայրենիքի վերածննդի և վերադարձի հույսի խորհրդով: Երկնքում սլացող երեք ծիծեռնակները մարմնավորում են Հույսը, Հավատը և Սերը առ հայրենիք: Դրանք այն ուժերն են, որ առաջնորդում են դեպի ազատություն ու վկայում սպասված ավետի մոտալուտ լինելը: Կարմիր կակաչները խորհրդանշում են հանուն հայրենիքի թափված արյունը՝ անմոռանալի զոհաբերության վկայություն: Հարսնացուի զինվորական հանդերձը դառնում է միասնական պայքարի խորհրդանիշ: Այն հստակ ուղերձ է. կանայք ոչ թե պետք է պարզապես դրոշ հանձնեն տղամարդկանց ու ճանապարհեն նրանց անմահության պայքարի, այլ անձամբ կանգնեն նրանց կողքին՝ կոչ անելով թշնամուն զոհել և ապրել հանուն հայրենիքի: Այն նաև վկայում է, որ պայքարը համահայկական է, և յուրաքանչյուր հայի ներդրումն անփոխարինելի է հայրենիքի վերադարձի սրբազան ճանապարհին: Իսկ հարսանիքը՝ որպես կենտրոնական սիմվոլ, խորհրդանշում է խաղաղության վերականգնումը, բարօրությունը և հայրենի հողում վերագտնված երջանկությունը:

Մարտա ԲԱԲԱՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ

✉ ք.Երևան, Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27
E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Թերթը վաճառքի ենթակա չէ:

Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում:
Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Տպաքանակ՝ 500
Ստորագրված է տպագրության՝ 28.08.2025թ.: